32 Մ. Մսերյան, Կենսագրություն Մանուկ բնչ Միրզայանի, էջ 170 (ձեռագիր Մեարգ Մաշտոցի անվան Մատենադարանին մեջ)։

տվալ վառոթի տակառներուն որոնք իր սայաստանած աշտարակին մէջ կգտնվեն: Հաջորդ օրը իր դիակը միայն կգտնենին:

Իր մարդիկը, որոնք բազաբին զանազան կողմերն էին, շկրցան իրեն օգնութեան հասնել, բայց այնուամենայնիվ դիմադրութիւն ցուց տվին բազաբին դանազան կետերուն վրա, ոմանք փութալով սուլթան Մահմուդը պաշտպանել իր պալատին մէջ որ նույնպէս պաշարված էր բմբոստներն: Ամբոխը, այս անգամ, իր զահրեկեցութունը կուզի և սուլթան Մուսթաֆայի վերադարձը իր զահուն վրա: Այդ ազաղակները վճռեցին Մուսթաֆային ճակատագրի: Մահմուդի մարդիկը խեղդամահ բրին դայն: Սուլթան Սելիմի վրեժն էր որ կանսվեր այս կերպով:

Վմբոստները ի վերջո պիտի հաղթեն սակայն: Բայրաքթարի զխալովոր կուսակիցներուն ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթէ խույս տալ մայրաքաղաքն: Անոնց մէջն էր նաև Մանուկ բեյ:

Կանգ կառնեն այսպէս Ռուսո հետ սկսած շփումները ևս կրասնակուտկի, ռուս պատվիրակը Մանուկ բեյի մոտ էր ճակատագրական այդ դիշերը, հաջորդ օրը Քուրբիտ պատասխանը առնելու և վերադառնալու համար Պրոդորովսկիի մոտ:

Հաջորդ օրը, սակայն, ուրիշ բան չէր մնացեր իրեն ընելու, բայց եթէ հեռանալ ինք ևս Պոսն:

16.

ԲԱՅՐԱՔԹԱՐԻ ՀԱՄԱԿԻՑՆԵՐԸ ԹԻՒՍՁՈՒԿ ԿՀԱՄԱՍԵՄՐՎԻՆ

Բայրաքթարի սպանութեան հետ մեկտեղ ցրեխ ցրեխ կըլլար այսպէս Ռուսուկի երբեմնի օջախը: Այդ օջախը կազմող զխալովոր դեմքերը, որոնք իրեն հետ միասին Պոլիս փութացեր էին և զին ստանձնեք երկրին ղեկավարութեան մէջ անոր վարչապետութեան ատեն, որևէ մեկէն ալիքի պատճառներ ունենին ենիշերիներու վրեժագրութենեն սարսափելու, և եկան աճառնել Ռուսուկ, ուր զեռ չէր հասեր ենիշերիներու ուժը և ուր զեռ իր պատասխանի Ռուսուկ, ուր զեռ չէր հասեր ենիշերիներու ուժը, երբեմնի աչ բազուկը Բայրաքթարին:

Բայրաքթարի կուսակիցները համախմբվեցան այսպէս Ռուսուկ, ուր պահ մը խորհեցան նույնիսկ դիմադրութիւն մը սարքել Պոլսո իշխանութեանց դեմ: Բայց այս արգես իրենց կարողութենեն վեր էր: Ենիշերիները հետզհետե կամրանային Պոլսո մէջ, և կըանային այս անգամ ալ Մահմուդ Բ.-ի խաղաղիկ դարձնել իրենց: Եթէ խնայեք էին անոր կյանքին՝ այն պատճառով էր միայն որ Մահմուդ վերջին շտապիղջն էր Ալ-օսմանին, և այլևս արու մարդ չկար օսմանի գերդաստանին մէջ որպեսզի դայն բերին զահուն վրա: Մյուս կողմն Պոլսո նոր ռեժիմը Ռուսուկի շրջաններուն մէջ հենակետեր կապահովեր իրեն և այսններ կորսար օջակելու համար Ռուսուկը:

Եվ սակայն Պոլսո իշխանութիւնները պահ մը վարանեցան: Նույն իսկ Քյոսե-բեհյա Ահմեդ էֆենդին իր պայան ճանչցան Ռուսուկի կտարվիք ենթադրելու թէ սուլթանը ևս զին ունեցած է այս ճանաչման մէջ: Ահմեդ էֆենդին էր որ Մահմուդը գտեր էր պալատի իր թաքստոցին մէջ և փրկեք սուլթան Սելիմի սպանութեան օրը:

Մերիած, 1809 հունվար 28-ին Շամպայնի կգրե, այս անգամ կրայովայէն, թէ Ք. Պուրը ստիպվեցաւ ճանշնալ Քյոսե-էֆենդին իբրև հրամանատար Դանուբյան թուրք զորքերուն, և կըսե թէ ան երկար ատենն ի վեր բանակցութեան մէջ էր առսերուն հետ, ինչպէս էր «Մանուկի» հայը, որ

իր հետ մեկտեղ այս պահուստ մուտքով կզանձի և որ կարևոր գեմք մըն է վալահյո մեջ, հարուստ և բոյար, Քյոսե-էֆենդին, կավելցնեն Մերիաժ, նվերներ ստացալով Բուխարեստի ուս հյուսպատու Քիրիբոյի միջոցով³³,

Ահմեդ-էֆենդիի մոտ հետզհետե համախմբվեցան՝ բացի Մանուկ բեյն՝ ևս և Կապուտան—փաշա Ռամիզ, Խչե բեյ, բոլորն ալ տրամադիր մուտքովի այսինի գործակցելու:

Մուտքովի նախկին խումբն Մեհմեդ Քահսին, որ Երևանական գործերու վարիչի (ղեկավար) պաշտոն վարած էր Բայրաքթարի կառավարության մեջ, անոր հետ միասին սպանված էր ենիշերինբու 1808 նոյեմբեր 14-ի գրոհի ատեն:

Հայաժանքեն ազատեր էր միայն Մեհմեդ Սայիդ Գալիր բեյ, նույնպես մեկը մուտքովի խմբակն որ Բայրաքթարի իշխանության օրերուն արտաքին գործերը կվարեր նախարարության մեջ իբր Ռեիս-էֆենդի: Ավելին, Քուրբիտ արտաքին քաղաքական ղեկավարության մեջ ան ղեր պիտի կատարեր ևս հետագային, միշտ իբրև Ռեիս-էֆենդի, և ինչպես պիտի տեսնենք մեր հաջորդ հոդվածին մեջ՝ թուրք պատվիրակությունը պիտի ղլխավորեր ուսակթուրը հաշտության բանակցություններուն մեջ, միշտ սերտ բարեկամ մնալով Մանուկ բեյին:

Ինչպես հայտնի է՝ թշնամությունները պիտի շարունակվին ղև Երևանական տարի: Այդ տարիներուն ընթացքին ռազմական զործողությանց դուզընթաց, հաշտության փորձեր ևս պիտի շարունակեն տեղի ունենալ, և բոլորին մեջ ալ ղեր պիտի ունենար ինքը Մանուկ բեյ: Առիթ պիտի ունենանք անդրադառնալու անոնց բոլորին:



Տարակույս չկա որ Բայրաքթարի անհետացումն ամենևն շատ հրմուղը Ֆրանսան եղալ: Լանձին անոր իր ծրագիրներուն ամենեն ահեղ խոչընդոտը չքացած էր ասպարեզեն, ու ինք կհուսար որ Պոլսո նոր տերերը պիտի հրաժարին ռուսերուն հետ հասկացողության որևէ փորձ և կատարվածը պիտի շարունակեն պատերազմը:

Նույն հրճվածքը ղգացած պիտի ըլլա ան՝ երբ մուտքովի բույնը բանդվեր վերջնապես, և չբանար այս կերպով թուրք ղեկավարներու վերջին կորիզը որ կուսակից կմնար ռուսերուն հետ արագ հասկացողության մը՝ անց Ֆրանսայի միջնորդության:

Բայց ղեպքերը իր հուսացածն բոլորովին տարբեր կերպով պիտի ընթանային:

17.

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԼԵՂՎՈՎ

Փակելն առաջ ռուսները հասկացողության փորձերուն կառչին շերտանք՝ որ վերջ կգտներ Բայրաքթար Մուսթաֆա փաշային Լզերական մահազան և իր համախոհներուն ասպարեզեն չքացման հետ, ուզեցինք սույն հոդվածին կցել, Մանուկ բեյի արխիվն իսկ քաղելով, բանի մը կարևոր փաստաթուղթեր:

Այս փաստաթուղթերը, որոնք լույս կտեսնեն առաջին անգամ, կուզան վկայելու կարևոր այն ղերին մասին զոր Մանուկ բեյ խաղաց ռուսները:

33 Հուսուցանքի, Գոկոմեհտեներ, հավելված, էջ 536:

մերձեցման փորձերուն մեջ, ինչպես և այն անսահման վստահութեան մասին՝ զոր Բայրաքթար Մուսթաֆա փաշա կուսածեր զեպի Մանուկ բեյը ոչ միայն Ռուսոյն կտնոված շրջանին իրեն բաղարին այսն և ճետո իբրև սպարապետ Գանուրի վրա գործող թուրք բանակներուն, այլ սաղարպամ դառնալն ետրև ար:

Անտր կվկայէն նաև այն համարման մասին՝ զոր ռուս վիճմորական վերին շրջանակները կստուցանէին Մանուկի հանդեպ այդ առաջին շփումներու ընթացքին, համարում, որ հետզհետե պիտի ամբանար 1808-էն հետո երբ Մանուկ բեյ ամբողջովին պիտի գործեր ռուս շահերուն շրջանակին մեջ՝ օգնելով նախ ռուս բանակի հետագա գործողութիւններուն, և հետո վճարական զեր կատարելով հաշտութեան կերման ատեն, հաշտութիւն, որ իր կարգին իր ուշաքրով ազդեցութիւնը պիտի ունենար նապոլեոնի ձախողանքին մեջ, ինչպես մեզ ցույց պիտի տա երկրորդ մասը մեր սույն հոդվածին:

Քանի մը փաստաթուղթեր ալ կրաղենք Ռուսիո արտաքին բաղարականութեան արխիվէն՝ օգտվելով Մանուկ բեյի Բուխարեստի արխիվին մեջ պահված անոնց ֆոտո-պատճեններեն, լուսաբանելու համար ռուսեթուրք շփումներու առաջին շրջանը և, մանաւանդ, Բայրաքթար Մուսթաֆա փաշայի և Պրոզորովսկիի միջև առաջին հարաբերութիւնները: Փաստաթուղթերու ուրիշ շարք մը պիտի կցվի սույն հոդվածին երկրորդ մասին, որ նվիրված է Մանուկ բեյի կատարած զերին Բուխարեստի ռուսեթուրք զանազորի կերման մեջ:

I.

ՐԱՅՐԱՔՔԱՐ ՄՈՒՍՄԱՅԱ ՓԱՇԱ՝ ԻՇԵԱՆ ՊՐՈՂՈՐՈՎԱԿԻՆ

ՌՈՒՍՁՈՒԿ. 1808 փետրվար 7 (հունվար 26)

Գերամեծ և վստահալու բարեկամդ իմ

Անբացատրելի է ուրախութիւնը զոր զգացի կարգալով ինձ ուղղած ձեր նամակը ուր ցայտուն կերպով արտահայտեր էիք ձեզ համարող զգացումները և փափարք վերահաստատված տեսնելու ներդաշնակութիւնը և իրարահասակացողութիւնը երկու կայսրութեանց միջև, ինչպես և ամբարպնդված վերտախի՝ գանտեր արդեն միացնող կապերը, մարդկութեան հանգիստ պարգևելով այսպես, և անոր անհրաժեշտ եղող խաղաղութիւնը: Այս զգացումները կուզան ավելնալ այն Բարձր զաղափարին զոր արդեն կստուցանեի ձեզ հանդէպ և որ պատճառն է զեպի ձեզ ուխտած իմ նշմարիտ նվիրումիս: Զպիտի զաղբիւմ ձեր բարբրութեան համար մաղթանքները ընկեի և միշտ փրճառել ձեր բարեկամութիւնը: Շատ ապահով և շատ ծանոթ են օսմանյան կայսրութեան ստիպողական բաղձանքները ռուսական կայսրութեան հետ ամուր խաղաղութիւն մը վերահաստատելու և նորոգելու իրենց հին բարեկամութիւնը և՛ Պետերբուրգի արքունիքը ատոր տրամադիր է ինքն ալ, ինչպես կզրեր բարեկամական ձեր նամակին մեջ, և ոչինչ ալ չի լավ կհամապատասխանէ Բ. Դրան տեսակետներուն: Եվ ապահովարար այդ նկատումն է որ ռուսական արքունիքը Քիլիսիի զանազորին կերումեն անմիջապէս հետո, ձեր հարգելի անձնավորութիւնը նշանակեց բանակցելու և այնքան բաղձացված հաշտութիւնը կնքելու երկու կայսրութեանց միջև, և որ այդ լիազորութիւնները ան ձեզի տվավ, փրկարար այս զործը իրականացնելու և ամբարտելու համար: Ռուս արքունիքին մտադրութիւնը նշանակելու ատեն ձեր բարձրութեան նման լուսամիտ անձնավորութիւն մը որ գործերու մեջ իր ճարտարութեան կմիացնէ բարբրախտ տրամադրութիւններ խաղաղութեան և ազգերու հանգստութեան համար, չի կրնար ուրիշ նպատակի համար ըլլալ բայց եթէ արագացնելու վերադարձը բարեկամութեան և կատարալ:

ներդաշնակութեան որոնք երբեմն գոյութիւն ունենին հին դաշնակիցներու և բարեկամներու միջև և նախապէս է նույնպէս որ այն ուղղակի հարաբերութեաններով, որոնք տեղի պիտի ունենան ձեր և իմ միջև, կարելի պիտի ըլլա ավելի արագ և ավելի դյուրին դարձնել այս գործին ուղին, և ավելի արագ հասնիլ բաղձաքոված նպատակին: Եւ պարզ է որ պիտի ուղեր նպատակ ձեր աշակցութեամբ ալ, իբրև մեկը որ ունի անհրաժեշտ հեղինակութիւնը գործածելու համար բոլոր միջոցները հաջողութեամբ ապահովելու համար անոր:

Բանի որ դուք բացիք արդեն հաշտութեան և բարեկամութեան դուրս, շատ արդար է և տեղին՝ որպէսզի դայն շփակէք այլևս, շարժելով այն անկեղծ և ուղղամտ տրամադրութեամբ որով առաջնորդված էք միշտ, և հետո պահելով բոլոր ձեռքեր իմ և զանազաները, և ուրիշ միջոցով շունչաւով բայց կէք բարեկամութեանը, պիտի շարունակէք մշտական և ուղղակի թղթակցութեան պահպանել ինձ հետ: Ինքս հետևելով բացութեան կանոններուն, և իբրև զներքի մարդ, առանց իմ սեփական գործերս հանձնարարելու ուրիշներուն և ոչ որի թույլատրելով միջամտիս ըլլալ անոնց մէջ, քանի որ վարժված եմ իմ գործերովս ինքս առանձին գրողիլ, դուք ևս ըլլալով քաղ և վեհանձն մարդ, պետք է որ վարժիք բնասանբար և մեր պատասխաններն ու կասկերք մենք միայն գիտենանք:

Ստապելու համար ձեր սեփական վեհասաներուն որոնք ձեր բարեբարներն են և որոնց շնորհներովն ու բարիքներովը ողողված ենք, օգտակար ըլլալու համար մարդկութեան, բոլոր միջոցներով շնայալու համար աշխարհին ապահովել հանգիստ և հանդարտութեան, և խաղաղ կեցութեան մը ժողովուրդներուն և խեղճ հպատակներուն, մեր պարտքն է և հարկադրանք մը որուն կենթարկեն մեզ մեզ վստահված պաշտոնները, Մուսթաֆա փաշան է որ կզիմե իշխան Պրոզորովսկիի, անոր հայտնելու համար իր նկատողութիւնները առանց զիմելու ձեռնարկութեանց և ձեռնու, բայց միայն բովանդակ անկեղծութեամբ և ստորացութեամբը անկեղծ բարեկամի մը, և արտահայտելու և հաղորդելու համար ինչ որ վերև կերևա՝ գրված է մեր ներքև նամակը և շտապողաբար ուղարկված մեր մարդուն միջոցով: Եվ երբ տերոջ օգնութեամբ ան ձեզ կհասնի և կտեղեկանար անոր բովանդակութեան, կհուսանք որ ան կատարյալ փոխադարձութեան կարծանանա ձեր կողմն ևս կիրարկելով ինչ որ կհարկադրեն բարեկամութեանն ու անկեղծութեանը: Կպահանջենք բարեկամաբար որպէսզի միշտ հաստատակամ և անհողորդ մնար մտերմութեան և անկեղծ բարեկամութեան մէջ³⁴:

II.

ԻՇԽԱՆ ՊՐՈԶՈՐՈՎՍԿԻ ԱՐՄԱՔԻՆ ԿԱԽԱՐԱՐ ՌՈՒՄԻԱՆՑԵԼԻՆ

Յալ. 1808 փետրուար 10 (հունվար 29)

Կհիշեք իմ դրութիւններս որոնց մէջ կզրնի ՍԵՐԱՔԵՐ Մուսթաֆա փաշային մասին, թե ան սկսած է բարեկամական հայտարարութիւններն ընել ինձ՝ ըլլա նամակով, ըլլա իմ կողմն իրեն զրկված սուրհանդակներու միջոցով, և թե, իմ ուղարկված նամակներնս մեկուն մէջ բսեր էր թե նոր բեկամ մը շահեցա ինձի:

Նախորդ սուրհանդակով ձեզ ուղարկված սույն տարվան 22 հունվար թվակիր և 72 համար գրութեամբ ձեզ հաղորդեք ի իր նամակին վերջաբանը:

34 ՄՈՒՔԱ, գործ 1919, թղթ. 163—164, ֆրանսերէն թարգմանութեան թուրք բնագրին:

այսմ ալ ներկա սուրհանդակով ձեզ կզրկեմ թարգմանութիւն պատահներ ուրիշ նամակի մը զոր ստացա Մուսթաֆա փաշայնէ, Է տառին ներքև:

Այսօրվաբար ձեր վսեմութիւնը պիտի զարմանա նման առաջարկն մը և անոր կողմն հղած անձնկիրութիւն և բարեկամութիւն արտահայտութենէն: Սույն նամակին հետ պիտի գտնեք թարգմանութիւնը ու ցանկը այն նվերներուն զորս ստացա իրմն և զորս առաջին առթիվ պիտի զրկեմ կնոջս, որովհետև բոլոր աչք նվերները կանացի գործածութեան հատուկ են:

Սույն նամակին վարկածակաւ հետևյալ եզրատեսութիւնները կհանեմ ես. կրնամ ենթադրել որ Մուսթաֆա փաշա, լիակատար վստահութիւն չունենալով Բ. Գրան վրա, կուզէ, Ռուսիո հետ հաշտութիւն կնքելով մասնավոր պայմաններով, միասին զործել Բ. Գրան զեմ, մեր կողմն ձանձղվիլ սույն շրջանի իբր կառավարիչ: Իր նամակին զանազան հատվածները կապացուցանեն սակայն թէ նման գործողութիւններ երկու կայսրութիւնց վեհապետներուն կվերապահ են: Պետք կըլլա ուրեմն ստույգ նկատել որ ինձ ուղղված իր այս նամակը զրված է օսմանչա Գրան բարձրագոյն իշխանութիւն պետութեամբ, ինք գործածված ըլլալով իբր պարզ գործիք մը:

Տեղեկութիւնները որոնք կցված են Բ տառին ներքև, թէև սյարզ արույցներ են լոկ, ինձ կհավատեն թէ <զանոնք բերող> թղթաբերը որ այլևի առաջ հասած է Ֆրանսական սուրհանդակէն, Պոլիս բերած է Բ. Գրան համար անհաճ լուրեր Փարիզի անոր գործակատարէն այսինքն այն մասին թէ Ռուս արքունիքին և Ֆրանսիայի հովանութիւնները կնախատեսեն ինչ ինչ շրջաններու անջատումը թուրք կայսրութիւն հողամասէն: Արդ, Բ. Գուռը կորսնցուցած է արդէր իր վստահութիւնը միջնորդին՝ նապոլեոն կայսեր վրա և կփափաքի՝ արդյոք Ռուսիո հետ հաշտութիւն կնքել մասնավոր պայմաններու մեջ, առանց որեւէ միջնորդութիւն, — բան մը զոր կարելի չէ իրականացնել բայց եթէ զազանի:

Իմ այս վարկածիս վրա հիմնված է նաև պատասխանը զոր ես տվի Մուսթաֆա փաշային, պատասխանն որուն պատճենը կցված է Գ տառին ներքև: Այս կացութիւն մեջ, նկատելով որ ան ուղղամիտ կտիտղոնն դիտւելուք եղավ անոր ցույց տալ իմ բովանդակ արտաբեր անկեղծութիւնս Ատոկն է որ ստիպվեցա Մուսթաֆա փաշային տալ կարեւոր բացատրութիւն մը, հայտնելով իրեն որ իմ կարծիքովս անհնարին է որ թուրքերը համակերպին ինքնաբերաբար իրենց հողերն զիջելու, և վերջապէս սպաջցուցի իրեն թէ աներեկակայնի է որ անգլիացիք ամուր հողի վրա ըլլան թրով՝ անկարելի չէ որ անգլիացիները տված ըլլան անոնց այս հատակագիծը, ստիպելու համար մեզ Բ. Գրան հետ կնքել այս անշատ հաշտութիւնը և այս կերպով մեր արքունիքին հետ գինակցութիւնը վերահաստատել:

Եվ եթէ բարեկամական ոգովով զրած իմ այս նամակս Ֆրանսացիներուն ձեռքն իյնա, այնուամենայնիվ ես անոր մեջ շեմ գտնեք որին բան որ չհամատասխանեն անոնց շահերուն: Անոր մեջ ցույց տված եմ լոկ նորին վեհափառութիւն կայսեր փափաքը խաղաղութիւն հաստատելու աշխարհի, ինչպէս նաև զույգ կայսրութիւնց մեջ, այսինքն նորին վեհափառութիւն կայսրութիւն և Բ. Գրան կայսրութիւն, բայց միևնույն ատեն զգացնել տված եմ թէ հաշտութիւնը պետք է կնքվի պատվովոր և առանց շահու, որովհետև այս իրավունքը կարելի չէ զլանալ որեւէ սեկուն: Իսկ նամակին վերջավորութիւն մեջ գիմակաղերծ ըրած եմ իրենց այս ձեռ գրվոր:

Վերջապէս, փոխարեն Մուսթաֆա-փաշայի կողմն ինձ զրկված նվերներուն, ես ալ զրկեցի իրեն ամենաբնտիր սամուրմուշտակ մը որ զեռ կմնար ինձ և որ 3000 ոտուրի կարծեր: Այս առթիվ կկրկնեմ խնորանքս որ ինձ կարգ մը իրեր զրկեք, որովհետև կարելի չէ նախատեսել թէ Երբ և ի՞նչ պարագաներու մեջ անոնք պետք կըլլան ինձի:

Եվ հիմա երջանիկ պիտի ըլլամ եթէ այս առթիվ իմ ըրածներս արժանանան նորին վեհափառութիւն հավանութիւն:

Գուռ, շատ հարգելի տեր, պիտեք թէ որբան փշտ են թաղաթական խըն-

մտուցյունք. Հետևաբար Բոնսպարտ պիտի ստիպվի լեհաստանն և որիչ վայրերն զորք փոխադրել Սպանիա:

Յրանսական զործակատարք կփորձն հներքել այս լուրերը և մանավանդ Ավստրիո պատրաստուցյունները, որոնք ինքնին կհաստատան ստուգուցյունը հիշյալ լուրերուն:

Մյուս կողմն կտեսնվի որ Ռուսիա կհետևի զկայրերուն և առիթի կբուստու, և հայտնաբար պիտի շանա անկն հետո հաշտուցյունը կըրկէ Բ. Գրան հետո եւլ սակայն առայժմ ստույգ չըլլալով այդ ճեկադրուցյունը, պետք է զգուշախալմբ վերաբերվի զեպի Յրանսան, և հետևաբար երբ Ֆրանսական զործակատարին պիտի հաղորդվի, լստ կայսերական արքունիքի սովորուցյունից, նորին հեռափառուցյան Սուլթանին զահճաբարաբար, մեր Ռեխսփնեյնի պիտի հաշտուցյան անոր, որպեսզի ան ալ իր կարգին հաղորդե իր կաստավարուցյան թն նորին վեհափառուցյան վճռական բաղձանքն է այս օրերս հաշտուցյուն կըրկէ:

Միևնույն ատեն ստիպողական կերպով զրվեցավ Մուհիբ էֆենդիին որպեսզի հետաքրքրվի թե ո՞ր պիտի վերջանա հարցը ներկայիս, Փարիզ թն ալլուր:

Մյուս կողմն հաղորդվեցավ թե՛ Յրանսայի և թե՛ Ավստրիական կատավարուցյան որ Բ. Գուրը, Գանսբյան սահմանին վրա տիրող հրատապ կացուցյան բերմամբ, թիվ մը հող չպիտի գիշի և որ լեթն այս բանին համար պատերազմը վերսկսիլ պետք ըլլա՝ պատրաստ է այդ բանին ալ:

Բեյզազդին Ռուստուկ այցելուցյունը և այդ առիթով ունեցած տեսակցուցյունները՝ պարզ ճամբորդուցյան մը քնույթը յունեին անշուշտ. ան պաշտոն ունեւր շոշափումներ կատարելու, և իշխանապետուցյանց մասին ձեռն հետ ունեցած իր խոսակցուցյուններով՝ աստիճանաբար ներշնչել իրենց կարգ մը պայմանները:

Եվ ահա հրահանգները որոնց մասին խոսեցա վերք:

Եթե այս գիրք ձեզ հասած ատեն որնէ ռուս պաշտոնատար շքտնիքի Ռուստուկի մեջ և բոլոր Բուխարեստ ըլլան, ձեր հարմար տեսած մեկ անձ. նախորդուցյան ձեռով մեր պատասխանը հասցուցը Պրոզորովսկիին, և ձեր կողմն զրկված նամակով մը հաղորդեցը իրեն թե մեծ-վեզիրեն ստացած էր զայն որպեսզի ֆելդ-մարշալին հանձնվի, ավելացնելով միևնույն ատեն թե ունիք կարգ մը մտերմական հայտարարուցյուններ ընելու իրեն հանուն մեծ-վեզիրին և հրավիրելը զայն որպեսզի Ռուստուկ զա տեղեկանալու համար անոնց:

Ձեր հանդիպման ժամանակ նախ անոր փոխանցեցը մեր բարևները և բեր սնոր որ լեթն այն ժամանակ բանուկին հրամանատարն էի միայն, և իմ բովանդակ անկախութեան հակառակ՝ պարտավոր էի հրահանգներ ստանալու Պոլսեն, ներկայիս նոր վեհապետ մը եկած է զահուն վրա որ ինձ վստահած է կայսրութեան կնիքը՝ լիակատար անկախութեան տալով ինձ իմ զործունեութեան մեջ:

Հաղորդեցիք նաև անոր որ իրականացավ բացարձակ միութեան մը Անսպարտու և Ռումելիի բոլոր իշխանավորներուն հետ և որ ներկայիս լիակատար հանդարտութեան և կարգապահութեան կտիրե, անպես որ պիտի շանան սփարտի այսօրերս բաղձաղով հաշտուցյունը կերպ և կերպներու միջև, ռուս կատավարութեան ներկայացուցիչներուն հետ բանակցութեանց միջոցով: Միայն թե բանի որ Վալաչիո և Մուլդովայի իշխանապետութեանց նկատմամբ զանազան մտադրութեանց մասին կիսովի, թուրք կատավարութեանը ոչ մեկ թիզ հող չպիտի գիշի, իսկ նորին վեհափառուցյուն Սուլթանը արդիլած է այդ մասին խոսիլն անգամ:

«Ըսեք զարձայլ» որ Փարիզեն ստացված լուրերու համաձայն երկու կողմի պատվիրակները նույն իսկ խոսակցութեան շնն սկսած զեռ, չլ տեսնուրված ոչ մեկ երկրի և ոչ մեկ ժամանակի մեջ որ պիտադադար կերումեն տարի մը հետո, հաշտուցյունը ձգձգվի առանց որնէ բանակցութեան տեղի ունենալու: Ո՞վ է պատճառը այս հետաձգումներուն, Յրանսա՞ թե Ռուսիա,

Հայտնի չէ, նժե Փարիզի մեջ պիտի չկրնա վերջանալ — քեր տնոր — ուրիշ ճամբա մը գտնենր: Ե՛նք զիտնանր այդ մասին Ռուսիո անկեղծ պատասխաներ. մենք ալ կշանանր անհրամշտը կատարել մեր կողմն: Այս պատերազմին սկիզբն ու վախճանը հայտնի ըլլալով, է՛նք բանակցութեանց սկսովի, սրմամբ ըլլալով երկու պետութեանց մաղնի բարեկամութիւնը և բարյացակամութիւնը, խոսակցութիւնները երկար պիտի չտևեն, և ի՛նչ ժամանակն պիտի հանգին լալ վախճանի մը: Այնպէս որ կկարծեմ թէ բարձր կառավարութիւնը իր աշակցութեանը պիտի տա որպէսզի հարգվին կարգ մը պայմաններ՝ որոնք զստութեան ունեն մինչև պատերազմը, և պահպանուի պայմանակր:

Այս խոսքերը պիտի հայտնենք անոր մտերմական ձևով խոսակցութեանց ընթացքին, աստիճանաբար, բոտ պահանջին:

Ինչ կվերաբերի աչն խնդրին զոր առաջարկեր է Բեյզազն, աչինքն աչն հարցին թէ ոտս կատարութեանը կրնա՞ ապահովիլ Ռուսիո կողմն Ֆրանսայի հետ պատերազմի վերսկսման պարագային, ոտս կառավարութեանը կրնա՞ այդ պարագային որեն կասկած չունենալ Ռուսիո մասին: Այդ բանը ձեզ կսպառնովմ իձնական կերպով: Այդ աթիվ կարելի է կցել յոթը կզգիներու խնդրի:

Այնպիսի ժամանակ մը Երբ ծանոթ են Սպանիո կացութեանը և աշխարհի մչուս զեպրերը, ստույգ է որ երկու երկիրներու համար ալ նպաստավոր պիտի ըլլա հարթել այս զժրախտութեանը որ անիմաստ կերպով ծագեցալ բարեկամ Երկու հին զրացիներու միջև և իրականացնել բարեղեպ հաշտութեան մը:

Բոլոր ասոնք հաղորդեցեր մտերմաբար Ֆելդ-մարշալին և համեցեք մեզ ուղարկել պատշաճ պատասխանը:

Ատոնք Բոլոր հաղորդեցեր պատշաճ եղանակով:

Ասկէ դատ հետարրովեցեր սպանեֆրանսական զեպրերով, և տեսք թէ բանակցութեաններ և տեսակցութեաններ տեղի կունենա՞ն արդյոր Ալտտրիո և Ռուսիո միջև, և մեզ հաղորդեցեր ստացված պատասխաններն ու ձեր լուսարանութեանները կացութեան մասին:

Ե՛նք որեն հարց տրվի մեր մասին, պատասխանեցեր թէ պիտի գաք այս կողմերը, բայց չէք զիտեր ճշգրիտ ատներ:

Բացարձակ վստահութեան ունինք ձեր վրա և համոզված ենք ձեր իմաստութեան և կարողութեաններուն մասին:

Որեն պատրվակ շտալով ուրիշին, ջանացեր ձերը գտնել անշատ հաշտութեան մը կերել ոտսներուն հետ, այս կերպով մեծ ծառայութեան մը մատուցանելով ոչ միայն ինձի, այլ նաև, մասնալորապէս, օսմանյան պետութեան:

Միտան թե է՛նք կարելի չըլլա հասնիլ բազմացված նպատակին՝ հակազդեցութեանը վնասակար պիտի ըլլա Ֆրանսայի մեջ: Հետևաբար պետք է աշալուրջ ըլլաք ձեր զործունեության մեջ:

ՄՈՒՍՏԱՅԱ

Բուխարեստ քաղաքի պատմութեան թանգարանի արխիվ. №. 26310, բեագիր. Ռուսերեն:

IV.

ԲԱՅՐԱԲՈՒԱՐ ՄՈՒՍՏԱՅԱ ՓԱՇԱ՝ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻՆ

Կ. Պոլիս. 1808. սեպտեմբեր 13
(1223 ռեբր 23)

Ե՛նք զայս և հավատարիմ Մամուկ բէյ
վերահասու եղա այս անգամ Քուլյուբ թաթար խալիլի ձեռքով ձեր
Պիկած գրութեաններուն և տեղեկութեանց: Ե՛նք Ռուսչուկի և այդ շրջաննե-

րուն մեջ որևէ բաց զգալի պիտի չբլլա և որևէ միաս առաջ պիտի չդա
<Դանուբյան> կղերքներու գործերուն, արտանմայն կուտամ որ զուր ևս
այս կողմերը դար և սույն տողերը կզբևմ այդ պարագան խնայեցելու համար
մեզ էրք աստուծամով մեզ կհասնի այս դիրք, խորհրդածեցեր, և եթև, ինչպես
զրեցի, որևէ միաս չի դար մեր զգործերուն, պիտեց որ թույլտրութիւն տրու-
յաւ է մեր այստեղ գալուն: Կհասամ թև կշարժիր ինչպես որ պետք է:
ՄՈՒՍՔԱՅԱ

Բախարևա Քաղաքի Պատմութեան Քանգարանի Արխիվ, Ն. 26419, Բնագր. Թարգմանք

V.

ԲԱՅԵՐԱԲՈՒՐ ԿՈՒՆՔԱՅԱ ՓԱՇԱ՝ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻՆ

Կ. Պոլիս, 1868, սեպտեմբեր 14
(1223 ռեթր 23)

Տեղեկացա մեր պատասխանին, և մեզ ուշադրեցի Պրոպարովսկիի ուղղ-
ված գրութիւն մը, մաս մը սպիտակ տեղ ձգելով անոր մէջ Կարգալե հե-
տո, եթև հարմար կգտնեմ՝ հանձնեցիք իրեն: Հիմա հետևյալ հանձնարարու-
թիւնն ունինք մեզ: Ընդ տարածվեցալ Ռուսիո և Եվրոպի միջև զաշխարհի
մը, և Ֆրանսական ղեկավարին մեկնումին մասին Պետերբուրգէն: Եթև լուրք
հաստատեցի՝ կաշտութիւնը պիտի փոխվի Եվրոպայի մէջ և նպաստավոր վի-
ճակ մը պիտի ստեղծվի օսմանյան կայսրութեան համար:

Ասկէ զատ օգտակար պիտի բլլա եթև Ռուսիո հաղորդվին կարգ մը
իրողութիւններ, և հետեւաբար հարմար է որ զանոնք տեղեկացներ Բիրպիցի
որ կգտնվի այդտեղ:

Մեր մեծ-վեզիրը — (կհաղորդի անոր) — կերևա թև նախապես ծանո-
թութիւն շունք կացութեան ինչ ինչ մասնահատկութեանց մասին: Մասնա-
վորապես թև հայտնի ըր անոր լիակատար հաշուով զուկ Ռուսիո և անոր
զգործութիւնը Ֆրանսային, սակայն մեր տիրոջմէն (մեծ վեզիրեն) ծածուկ
պահված էր իրողութեանց իսկական ղեմը: Հիմա որ ստանձնեց ամբողջա-
կան իշխանութիւնը, լուր ստացալ տեղի ունեցածներուն մասին և ահա թև
ի՛նչ: Զորավար Սերաստիանին, Երբոր եկած է Ստամբուլ, բոլոր կարևոր
փորձերը կատարած է օսմանյան կայսրութիւնը տանելու Ֆրանսայի կող-
քին՝ ոտուկնորք պատերազմին միջոցով: Ի վերջո մեր հանդուցյալ կայսրը
պատասխանած է թև պատերազմ պիտի շմղև հարեան Ռուսիո ղեմ: Հիշյալ
զորավարը, առեև իր մնալի հետո, իր կատարութեանն ղրկած նամակներ
ցուցնէլ տված է որ կհաղորդվին լուրեր զորո Ֆրանսայի կայսրը իր թև
բազիր էր Պետերբուրգէն, Ռուսիո և Անգլիո մերենայութիւններուն մասին
բնղղեմ օսմանյան կայսրութեան: Ան փորձած է իր տեղեկութիւնները ամ-
բացնել ցույց տալով Ռուսիո պատրաստութիւնները սահմանին վրա և ուղած
այս կերպով խաբել մեր պետութիւնը: Սամանյան կատարութիւնը կրկին
չէր համակերպած և թև բովականացած էր կարգ մը նախազգոյշական մի-
ջոցներով միայն, ռուսական բանակը, սակայն, իսլամ պետութեան ղեմ կարգ
մը անտեղի բայելուր զիմեց և արշավեց <անոր հողը>, մինչ անգլիական
նավատորմը կմտնէր Բուսամբուլ: Հիշյալ զորավարը այս իրողութիւնները
իբր այսպիսի տալով իր համաստուններուն, փորձած է համուկել մեր կա-
ռավարութիւնը, որ թևև ստիպվեցալ այս կետին վեր, բայց տեսնվեցալ ար-
դունքը:

Այսօր Ֆրանսայի պաշտոնատարները բլլա Փարիզի, բլլա Բուսամբուլի
մեջ կշարունակեն իրենց էնարիզները, խոսելով Ռուսիո մտադրութեանց մա-
սին, ինչպես և ի մասին Ֆրանսայի կայսեր փորձերուն զանոնք հարթելու

նամակագրութիւններ, հակառակ պարտադրանքին լեհաստան մնացած իր բանակը զրկելու սրպետի սուրբ ուժով ստիպել գանտներ:

Մեր տերը (Բայրաքիւմար) բմբունկը բոլոր աստեր, տեսալ նույնիսկ Յրան-տայի նախկին գրութիւնները այդ մասին և հասկցալ թե Փարսիի մեջ ոչինչ պիտի վերջանայ:

Մյուս կողմն Սպանիո պատճառով սկսած է խառնակիլ Եվրոպայի կա-ցութիւններ, և Յրանսա կրկին սկսած է զրոյնը սամանյան կայսրութիւնը: Գիտցել որ մեր տիրոջ հակումը զեպի Ռուսիան է, մեր հին գրացիներ Միայն թե ձեր կողմն կացութիւն համապատասխան զեռ ոչ մեկ բայլ ցույց տրլամ չբլլալով, մեր տերը ի վիճակի չէ որնէ բան պարպելու նորին վեհափառու-թիւն:

Որնէ կասկածն զուրս է թե հաշտութիւն կներմը այս օրերուն՝ օգտա-կար է Երկու կողմին համար ալ:

Այս օրերս Պոլիս պիտի մեկնիմ ես կարգ մը կարեւոր հարցերու համար և պիտի գտնամ ետ Սղատկար պիտի բլլա նթե ինծի հազորդը: Հշրդիտ պատասխան մը, որբան կարելի է շտտով, ի մասին հաշտութիւնն, սրպետի ես ալ զայն բերանացի հազորդեմ մեր տիրոջ և սրպետի զործերուն բնթացք տրլի բույն մը առաջ:

Եթե այս մասին կարգազրեք անհրամեշտ նախադրլանները՝ օգտակար պիտի բլլան անոնք:

Ամեն պարագայի մեջ ձեր կարծիքն կախում ունի սրպետի գանաղան համբաներն որդեգրենր ամենահարմարը: Այնպես որ որոշեցեր ինչ որ ձեր իմաստութիւնը կթելազրե ձեզ:

ՄՈՒՍԹԱՅԱ

Մտալն վա բուրեւերն զվամ է. «Պատգն և հարգանքի արժանի Մանուկ բէյի»
որ Բոլխարեստ կդտնվի», իսկ քրանսերէն. «Պր. Մանուկ բէյի» Ի Բոլխարեստ»:

Բոլխարեստ Բաղաթի Պատմութիւն Բանգարանի Արխիվ. Թիվ. 26232, բնագիր. Թուր-քերէն:

V.

ԲԱՅՐԱԳԹԱՐ ՄՈՒՍԹԱՅԱ ՓԱՇՄ: ԻՇԽԱՆ ՊՐՈՉՈՐՈՎՍԿԻՆԻ

Կ. Պոլիս, 1908, Ետեմբեր 13

Ասկէ առաջ ստացա բարեկամական ձեր զիրը Ռուսոյնի մեր վստա-հելի մարդուն՝ Մանուկ բէյի միջոցով, որուն այն ատեն հազորդեցի ինչ ինչ հանձնարարութիւններ: Այստեհանդերձ նկատի ունենալով այն խոր բարե-կամութիւնը որ զգոյթութուն ունի մեր միջե, մանավանդ երկուստեք մեր ունե-կամութիւնը որ զգոյթութուն ունի մեր միջե, մանավանդ երկուստեք մեր ունե-կամութիւնը՝ մեր երկու երկիրներուն միջե ևս վերստեղծելու երբեմնի ցած բաղձանը՝ մեր երկու երկիրներուն միջե ևս վերստեղծելու երբեմնի ցած բարեկամական մեր հարարերութիւնները, պարտք սնպեցի կրկին կարգ մը հանձնարարութիւններ բնեջ հիշլալ մեր վստահելի մարդուն սրպետի ձեր վստմութիւնը հազորդի անդամ մը ևս ինչ որ կհարկազրե ներկա կայսրութիւնը:

Անշուշտ ձեր վստմութիւնն ալ նկատի կառնե թե ոչ մեկ կրկրի և ոչ մեկ շրջանի մեջ նախընթացը չկա որ հաշտութիւնը ձգձգլի զինադադարի

կնքում են ավելի քան տարի մը հետո և որ դեռ լուսարանված չէ թե ինչ պատճառով և ուրիշ կու գտնուի <արգելք>:

Ասկէ զատ պարզ է որ ոչ մեկ արգելք չի կրնար հետաձգել վերանորոգումը Երբևեմի բարեկամական հարարներու թիւններուն սույն երկու բարձր պետութեանց մէջ որոնք ցանկացող են հարևանական լավ կապերու, և որ խաղաղութեան կնքումը նպաստավոր պիտի ըլլա երկու երկիրներուն ալ և հանգստութեան պիտի բերէ անոնց հպատակներուն: Այնպէս որ անկարգազրելիորեն լավ գործ մը կատարած պիտի ըլլանք եթէ պատճառ հանդիսանանք այդ օգտակար ձեռնարկին իրականացման: Ահա թի ինչն է որ դիտողն այս տողերը գրելու ձեռքի:

Մեր բաղձանքն է որ եթէ այս գիրը աստուծով ձեր ձեռքը հասնի, բարեհաճիք որքան կարելի է շուտ ձեր ցանկալի պատասխանը պայծառ կերպով գրել նպաստելով լավ գործի մը իրականացմանը:

Բոխարեստ Քաղաքի Պատմութեան Թանգարանի Արխիվ, N. 26390. Բնագիր, Թուրքերէն:

Պատմություն.— Բայրաքթարի սույն եամալը ևս չի գտնվիր ոտուական արխիվներուն մէջ, պարզ այն պատճառով որ ան Երզրոզի մէջ ձեռք հասած չէ: Զայն գտանք Մանուկ բնի թուղթերուն մէջ իր ծրարին հետ մեկտեղ որուն վրա հայ տառերով Թուրքերեն մականգրություն մը կա, համանաբար գրված հետագային Մանուկ բնի արխիվը դասավորողի մը կողմէ: Այդ մականգրությունը կրնէ. «Մագրագատան Փելզմարշալա միւսալիհանըն լապըս պիմիսինէ, անլաշիրը թի մահալին վերիմեմիշ» («Մեծ վեզիրին կողմէ Փելզ-մարշալին ուղղված՝ ի մասին հաշտութեան արագ ավարտման, կերնա թե չէ հանձնված իր հասցեին»):

Եվ բնականաբար չէր կրնար իր հասցեին գրված ըլլալ, որովհետեւ եամակին Մանուկ բնի հանձնվելուն հաջորդ գիշերն իսկ, 1568 Նոյ. 14-ին, տեղի ունեցած է Լեւիշերիներու ապստամբությունը որուն ընթացքին պիտի սպաննվէր Բայրաքթար, իսկ Մանուկ բնի խույս պիտի տար Պոլիսէն: Այդ ղեպերէն հետո գրությունը կկորսնցնէր ինքնին իր կարևորությունը:



ԷԶԵՐ ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԿՅԱՆՔԵՆ*

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

Բ

ԿՈՒՏՈՒՋՈՒԼԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՎ

1

Ռուսչուկի նոր կորիզը

Քայրաքթար Մուսթաֆա փաշայի եղերական մահը 1808 նոյեմբեր 14-ին՝ պահ մը ընդհատեց հասկացողութեան մը փորձերը թուրքերուն և սուսերուն միջև, փորձեր՝ որոնք սկսեցին ինչ, երբ ղեռ Ռուսչուկի էր Քայրաքթար իբր հրամանատար Գանուրի վրա գործող թուրք բանակներուն և պիտի շարունակվէին սաղարագամութեան կողմէն հետո: Վիճակը էր նախ հանդիպումը, որ նախատեսված էր նոյեմբերի 15-ի համար, երբ ռուս պատվիրակ Կրասնակուտսկի Բ. Գուս պիտի երթար Մանուկ բեյի հետ՝ ստանալու համար մեծ վեզիրին պատասխանը Պրոզորովսկիի առաջարկներուն: Իսկ աղետալի գիշերն հետո մեկը մշտախն ետեմն խույս լին տվեր Պուսեն Քայրաքթարի անմիջական գործակիցները, մանավանդ անոնք, որ անոր կողքին էին եղեր Ռուսիո հետ մեր-ձեցման իր փորձերուն մեջ ևս անոր ղեռ Ռուսչուկի գտնված օրերուն:

Անոնք բոլորը կուգային Ռուսչուկի համախմբվիլ հիմա, ուր այս կերպով նոր կորիզ մը կստեղծվեր, որ ոչ միայն հավատարիմ կմտար Քայրաքթարի «ավանդութուններուն» ի հետևից Պուստ մեջ ենթերիններու նոր տիրապետութեան, այլև տրամադրված էր ռուսերու հետ հասկացողութեան մը:

Մանուկ բեյի պիտի վիճարկեր ղեր կատարել նոր կացութեան մեջ այ: Ռուսչուկի տեսակ մը միջնաբերդ էր եզեր ցարդ իրեն համար, ուր տասնյակ տարիներ ընթացրին մտերիմ կապեր ստեղծել էր և բացառիկ հեղինակութեան կ'ուզէր բոլոր տարրերու և բոլոր խավերու մտա: Իր այդ հեղինակութեան կտարածել Գանուրյան բովանդակ շրջանին վրա, և սերտ նարարե թութեանները, զորս ուներ շրջանի բոլոր այաններուն հետ, բացառիկ զիրք սպանուած էին իրեն:

Իր սույն ազդեցութեանը կշեշտվեր մանավանդ իր վախելած վստահութեամբ ռուսերու մտա, որոնց հետ ինքն էր, որ շփում պահեր էր Քայրաքթարի օրով, և հիմա, երբ ռուսերուն հետ հասկացողութեան մը գալու նոր փորձարկ ևս կնախատեսուէին ինքն էր, որ կողմն էր դարձայլ կապ հանգիստանալու կողմերու միջև:

Նոր շփումներ ուսուերուն հետ

Քյուսե-ՔԼՏչյա ԱՏմեղ էֆենդի, հաղիվ տիրացած Ռուսզուկի այստնության, իր առաջին հոգևրեն մեկն բրավ բարեկամական կապեր վերսկսիլ ռուս հրամանատարության հետ, և ի հարկին հասկացողության մը ճամփան հարթիկ Երկու պատերազմիկ կողմերուն միջև: Ան հաշիփ կանոն մանավանդ յայ պարագան, որ ուսեեր կարող էին հանկարծ վերսկսիլ զինվորական յուշահատմած գործողությունները, որոնք կրնային ազևտարեր բլլալ Ռուրբերու՝ անոր այս խտունակ կացության մեջ:

1808 նոյեմբերի 20-ին ան Բուխարեստ կզրկեր Մանուկի հավատարիմ մարդոցմեն մեկը՝ Մարտին Սերաստյանը, որպեսզի ներկայանա իշխան Պրոդորովսկիի անոր հայտնելու համար իր ջերմ փափարը վերստեղծելու ուսեերուն հետ բարեկամական կապերը, զորս իր նախորդը—Բայրաքիթար Մուսթաֆա փաշան—մշակեր էր ռուս զորքերուն վերին ճրամանատարին հետ: Մարտին շատ սիրալիք կերպով ընդունվեցավ ռուս հրամանատարեն, որուն հանձնեց ԱՏմեղ էֆենդիի կողմն զրկված ընծաները և սրուն հարցումներուն պատասխանելով մանրամասն տեղեկություններ տվավ իրերու նոր դրության մասին Քուրբիտ մեջ: Պրոդորովսկի ինք ևս հավաստիք տվավ իր բարեկամական զգացումներուն մասին եղեպի Ռուսզուկի իր այս լավ հարեանը¹:

ԱՏմեղ էֆենդի ոչինչ չէր կրնար ընել սակայն առանց Մանուկ բեյի Ոչ միայն կարիք ուներ անոր խորհուրդներուն, այլ նաև անոր վայելած համակրության ռուս շրջանակներուն մոտ: Բարեբախտարար Մանուկ ճամփա ելած էր արցուն Պոլսեն, և հասած էր Վիդու:

ԱՏմեղ էֆենդի իսկույն հիսուն ձիավորներ զրկեց անոր ընդառաջ, որպեսզի զայն ապահով հասցընեն Ռուսզուկ:

Ռուսզուկ հասած—չհասած Պոլսեն՝ Մանուկ բեյի ևս առաջին մտահոգությունը կըլլար շփումները վերսկսիլ ուսեերուն հետ՝ շարունակելու համար հասկացողություն մը ընդհատված փորձերը: Ռուսզուկ ժամանելեն տասը օր հետո ան կանցներ Բուխարեստ ուր զինք մեծ համակրությամբ կընդունեին ռուս հրամանատարները:

Բուխարեստեն 1808 նոյեմբեր 28-ին (10 ղեկտեմբեր) զրված նամակի մը մեջ տեղվույն ռուս հյուպատոս Լուրա Քիրիթո կհաղորդե որ այդ առտուն Ռուսզուկեն Բուխարեստ ժամանած է Մանուկ բեյ, ընկերակցությամբ Մարտին Սերաստյանի՝ միասին բերելով Ռուսզուկի այսան ԱՏմեղ էֆենդիի մեկ զիրը Պրոդորովսկիի ուղղված, որուն հանդիպ իր տածած անձնվիրության զգացումները կնորոգեր ԱՏմեղ էֆենդիին այդ գիրով: Մանուկ բեյ պատմած է այդ առթիվ թե Պոլսեն Ռուսզուկ ստացված լուրերու համաձայն Բայրաքիթարի սպանութենեն հետո Պոլս Ֆրանսական զեսպանը խորհրդավոր շփումներ կունենա ըմբոստ ենիշերիներու հետ, բնականաբար զրգուելու համար զանոն: Երպեսզի խանգարեն ուսեերուն հետ հասկացողության զալու որևէ փորձ²:

Մանուկ բեյ ուսեերուն կպարզեր Ռուսզուկի մեջ այդ միջոցին տիրող

1 ՄԻԱՔԱ (Մոսկվայի ուսական արտաքին բաղարակնության արխիվ), գործ 1922, թգ. 495—496.

2 ՄԻԱՔԱ, գործ 1922, թգ. 566—567.

աշակցելու համար Գալիբ էֆենդին, որ Բ. Գրան կողմն հոն զրկվեր էր ուս-
ւերուն հետ բանակցութիւն սկսելու համար: Մանուկ բեյ իսկույն մեկնեցա՞վ
Ռուխարեսա, Ռուսշուկ ձղելով սակայն իր ընտանիքը՝ Պապիկի հոգածութիւն
տակ:

Իրապես ալ երբ Գալիբ բեյ կժամաներ Ռուխարեսա՝ Մանուկ բեյը կզտներ
այնտեղ, և սիրալիբ կերպով կզիմաւորեր զայն:

Մանուկ բայ կզգար որ ռուս և թուրք այս նոր խոսակցութիւնները որն է
էլրի պիտի չհանդիմ. ան հետեւաբար լուր զրկեց Պապիկին որպէսզի իր բն-
տանիքը ևս փոխադրե Ռուխարեսա. դշուրին չէր սակայն այս բանը. Ռուս-
շուկի բնակիչները կրնային արգելել այդ տեղափոխութիւնը: Մանաւանդ
անոնք զժողհ էին այն բանն որ թուրք պատվիրակները զեկտեմբերի վերջե-
լուն դարձած էին արզեն Պոլիս, մինչ Մանուկ դեռ կշարունակեր մնալ Ռու-
խարեսա: Պետք եղավ հայտարարել բոլորին թե Գալիբ բեյ Մանուկ բեյը
փոխանորդ նշանակած է իրեն մինչև իր դարձը Պոլիսն:

Շատ ավելի զժվար եղավ համոզել ռուսշուկցիները սրպէսզի զժվարու-
թիւն չհարուցանեն Մանուկ բեյի ընտանիքին տեղափոխութիւն անթիվ զեպի
Ռուխարեսա: Այնպէս որ Պապիկ 1809 փետրվար 21-ին էր միայն որ հաշո-
ղեցա՞վ զայն անցրնել Ջուրջովա, ուր Այդըն փաշա, որ վաղմտի բարեկամ էր
Մանուկ բեյի, երկու հարյուրի շափ զինվոր ընկերացուց անոնց մինչև Գայա,
այսինքն մինչև Վայահիո սահմանը:

Պապիկ ինքը ստիպվեցա՞վ դառնալ սակայն ևս, Ահմեդ էֆենդի մտ՝
Մանուկ բեյի ընտանիքը Ռուխարեսա հասցնել հետո:

Իրապէս ալ, Մանուկ բեյի և իր ընտանիքին տեղափոխութիւնը Ռուխար-
եսա՝ տեսակ մը ահազանգի դեր կատարեց Ռուսշուկի շրջանին մեջ: Հայտնի
էր որ անախորժ օրեր պիտի սկսեին հայերուն համար: Սուղի պիտի նստեր
անոնց իրենց համակրութիւնը զեպի ռուսերը:

Մանուկ բեյ տասնյակ տարիներ իր հովանավորութիւնն ու պաշտպա-
նութիւնը ընծայեր էր իր ազգակիցներուն, և նախախնամութիւն մը եղեր էր
տեղւոյն հայ համայնքին համար: Հիմա, անոր փախուստն հետո, իրենք
գիրենք վտանգի մեջ կսկսեին զգալ բոլոր հայերը:

Առաջին հերթին իրեն հետեւեցան զեպի Ռուխարեսա անոնք որ իր ան-
միջական գործակիցներն էին եղեր և որոնք խեթով պիտի դիտվեին հիմա:
Բայց հետզհետ անցա՞վ Ռուսշուկեն Ռուխարեսա անցնողներուն թիվը, սկսե-
լով համայնքին երեւելիներն: Անոնք կերպով մը կու գային Ռուխարեսաի
հայ համայնքը թարմացնել, այսինքն նոր շունչ մտցնել հայ ազգային կյան-
քին մեջ: Համայնքին տարեգրութիւննց մեջ առաւելապէս ռուսշուկցիներու
կհանդիպենք ատկեհ հետո ազգային գործերու գլուխը:

1809 հունվար 10-ին ռուս հյուպատոս Լուբա Քիրիքո կհաղորդեր իշխան
Պրոզորովսկիի թե Մանուկ բեյ մտերմաբար հայտնած է իրեն թե Ռամիզ
փաշա դեռ կտատմասի ռուսերուն գալ ապաստանիլ՝ հույս ունենալով տակա-
վին Քուրքիո մեջ հակահեղափոխութիւն մը վրա, և թե Ահմեդ էֆենդի ավելի
տրամադիր է հանձնվիլ ռուսերուն՝ մտահոգ իրեն սպառնացող վտանգներեն³,

Միևնույն Լուբա Քիրիքոն 1809 հունվար 17/29-ին իշխան Պրոզորովսկիի
կհաղորդե ինչ-ինչ տեղեկութիւններ զորս Մանուկ բեյ Ռուսշուկեն ստացած

³ ՄԱԱՔԱ, գործ 1928, թղ. 36:

էր իր հավատարիմ մարդուն Պապիկի միջոցով և որոնց համաձայն հայտնի Փեհլիւան աղան, որ կպաշտպաներ Իսմայիլը, հեռացած է այնտեղէն և ճամփա ելած զիպի Ռուսջուկ, Մանուկ բեյ հավաստած է թէ Ռուսջուկի այն և՛հ մեղ էֆենդին տրամադիր է Իսմայիլը ձգել իր բախտին և ուժ չհամախմբել Զուրջուլայի մեջ, ինչ որ թշնամութեանց վերսկսման պարագային նպաստովոր կացութիւն մը պիտի ստեղծեր ռուսերուն համար: Մանուկ բեյ խնդրած է որ բացորձակապէս զաղտնի մնան իր հայտնութիւնները՝ որովհետեւ կրնան անախտիժ գրութիւն մը ստեղծվի իր ընտանիքին համար որ զեռ կգտնվիր Ռուսջուկ Մանուկ բեյ հայանած է նաև որ Ավստրիա այս պահուս քնտրիզներ լարելու վրա է ի նպաստ Քուրբիտ Մանուկ բեյ բսած է ի վերջո գրեթէ բառ առ բառ. «Առանց համարձակելու շատ առաջ երթալ և առանց ոչինչ խոստանալու, կհուսամ թէ իմ ավլալներս և իմ միջոցներս մարաշաբախն (Պրոզորովսկիի) օգտակար պիտի ըլլան այնքան ազդեցիկ կերպով, որքան շպիտի կարենային ըլլալ 20 հազար ռուս զինվորներէ բաղկացած բանակ մը այս շրջաններուն մէջս:

Լուրս Քիրիբո իշխանին հանձնարարած է այս առթիվ այ. Մեսրոպը և իր գտովար Մարտին Սերաստյանը, զորս անհրաժեշտ է պահել Դանուբին անդին, որպէսզի շարունակեն իրենց ծառայութիւնները բաղձացված հաջողութեամբ»:

3

Հասկացողութեան փորձեր ու կծախողին

Եվ սակայն բուրբովին կանգ չէին առնր թրքական փորձերը հասկացողութեան մը գալու համար Ռուսիո հետ: Երկու կողմն ալ շահագրգռված էր օր առաջ վերջ տալու թշնամութեաններուն, բայց մանավանդ թուրքերն էին որ կարիր ունենին ատոր:

Այնպէս որ բացի Ռուսջուկի փորձերեն ռուս հրամանատարութեան հետ շփումներ ունենալու, Բ. Գուրը ևս ձեռնարկներ կընէր որպէսզի չիզվի Բայրաթբարի օրով ստեղծված թելը:

Արդարև 1809 փետրվար 12/24-ին Բուխարեստ կծամաներ և երեք օր հետ 3աշ կմեկներ թուրք պատվիրակութիւն մը Ռեխա-էֆենդի Ահմեդ Սեիդ Գալիբի գլխավորութեամբ:

Ութը օր հետո, մարտ 4-ին, 3աշ կմեկներ նաև զորավար Միլորադովիչ՝ որ ռուսական պատվիրակութիւնը կգլխավորեր, իր կողքին ունենալով զորավար Հարտինզն ու զորավար Կուշնիկովը:

Եվ այնուամենայնիվ բարեբախտ շեղով հասկացողութեան մը գալու այս առաջին փորձը:

Թուրքերը, ուժ առած անզեթուրք զաշնագրեն, որ հունվար 5-ին կերված էր Գարդանելի մեջ, անզիջող մնացին 3աշի բանակցութեանց ընթացքին և էր Գարդանելի անոնք խզվեցան օրովհետև թուրքերը կը մերժենին որնէ զրական հետևարար անոնք խզվեցան օրովհետև թուրքերը կը մերժենին որնէ զրական պատասխան տալ ռուսական վերջնագրին, այսինքն՝ հավանիլ անոր պահանջած հողային զիջումներուն: Կմնար որ Պրոզորովսկի վերջնական իր պայմանները Բ. Գուրան գիտցներ հատուկ սուրհանդակի մը միջոցով:

Տեսակցութիւնն՝ զոր 1809 մարտ 4-ին Մանուկ բէյ ունեցաւ զոր. Միւրազովիչի հետ՝ մեկն էր ուսերուն հետ անոր շփումներուն ամենէն կարեւոր գրովագնեմն, տեսակցութիւնն որու ընթացքին Մանուկ բէյ շնորհակալութիւն հայտնեց և նախ իր ընտանիքին Ռուսչուկին Բուխարեստ փոխադրութիւն տալիով ընծայված գլուխութիւններուն համար: Միւրազովիչ հիշեցուցած է Մանուկ բէյին՝ անոր բրած խոստումը իշխան Պրոզորովսկիի թէ բանակցութեանց խղճան պարագային պիտի աշխատի Ահմեդ էֆենդիի մոտ Իսմայիլի և Զուրջովայի անձնատուութիւն մատին և ինչպէրած է գործնական ծրարիներու անցնիլ այժմին: Մանուկ բէյ բացատրած է ռուս զորավարին փափակ գիրքը ուր կ'գտնուի Ահմեդ էֆենդի, այն կասկածներուն համար զորս իր մասին ունին տեղւոյն թուրքերը՝ իրեն ուսերուն նվիրված թուրքի և բսած է թէ անոր գործը հիմնապէս պիտի գլուխանա նթև ռուս զորքերը 10—15 հազար մարդով բանի մը տեղէ անցնին Դանուբը, ինչպէս Պիտերսքին, Թահովայի, Նիկոլայովսի, Սիլխատրեի մոտերին ու Գալացին և մեկ բանի օր զան պաշարնն Ռուսչուկի, որովհետև Ահմեդ էֆենդի պատրվակ պիտի ունենա զորք, ապամասփեթը և պարեն չըրկել պաշարված բերդաբազարները, որոնց անձնատուութիւնը հնարավոր պիտի դառնա այս կերպով: Առանց այս փրկարար միջոցին՝ դժվար թէ իրենց նպատակին հասնին ռուսերը, շեշտած է Մանուկ բէյ, որովհետև հակառակ Ահմեդ էֆենդիի բովանդակ բարչացակամութեան, որն է միջոց չկա արդիւնու որպեսզի զինվորներն ու ապամասփեթը Զուրջովայանցնին ի պաշտպանութիւն Զուրջովայի Միւրազովիչ միշտ այնգած է աչն կետին վրա թէ անհրաժեշտ է ամենն առաջ ապահովել բերդաբազարներուն անձնատուութիւնը, և կրկին թելադրած է Մանուկ բէյի զգացնել Ահմեդ էֆենդիին զժխարին կացութիւնը ուր կ'գտնուին թուրքերը, և առաջին հերթին ինքը, Ահմեդ էֆենդին: Մանուկ բէյ բսած է սակայն թէ նման փորձ մը Ահմեդ էֆենդիի կողմէ՝ պիտի միացնէր բոլոր թուրքերը և այնգած է իր նախկին թելադրութեան վրա, ավելցնելով որ ինք անձնապէս նվիրված կ'մնա ռուսական շահերուն և պիտի շնորհանա իր անձնվիրութեան ապացուցք տալ որն է առթիվ, և սակայն իրեն համար ավելի գլուխին է Ահմեդ էֆենդիին համոզել որպէսզի վաճառի անցնի ռուսերուն մոտ՝ բան թէ իրականացնել Զուրջովայի անձնատուութիւնը առանց ռուս բանակին մաս մը անցած ըլլալու Դանուբի հանդիպակաց եղերբը:

Միւրազովիչ միշտ համառած է սկզբնական իր տեսակետին վրա, և ավելցուցած է թէ ռուսերը որն է բան պիտի շահին եթէ Ահմեդ էֆենդի զառուսերուն հանձնվիլ առանձին՝ առանց նախապէս հանձնած ըլլալու բերդաբազարը:

Մանուկ բէյ բսած է թէ այնուամենայնիվ պիտի շարունակե իր աշխատանքները, և թէ առայժմ մեր լուրեր կսպասե Պապիկին՝ Ռուսչուկի մեջ տիրող տրամադրութեանց մասին:

Իշխան Պրոզորովսկի 1809 մարտ 17/29-ին Յաշին Պետերբուրգ՝ կոմս Ռուսչանցեին զրկված գրութեամբ մը կհաղորդէ բոլոր այն փորձերը, որոնք տեղի ունեցան Մանուկ բէյի միջոցով համոզելու համար Ռուսչուկի այս Ահմեդ էֆենդին որպէսզի առանց կալի ռուսերուն հանձնել Զուրջովայի, փորձեր որոնք ապարդշուն անցան սակայն՝ որովհետև Ահմեդ էֆենդի ի վիճակի չէր

Բագրատիոնի փորձը Միլիտարեն պաշարելու փոխարեն՝ զեկեամբեր 3-ին ան կրցավ գրավել Բուսլան:

Միլորագովիչ կձախողեր այս կերպով Զուրջովայի առջև, ձախողելով նաև անմիջական իր հուշանրուն մեջ: Ինչպես կզբ կոր. Լանժրոն իր օրագրին մեջ, Միլորագովիչ նման հաղթանակ մը կուզեր պատվովակ ծառայցնել իրեն՝ բնդհանուր հրամանատար գտնելու համար և ութը հոգի միայն տեղյակ էին Զուրջովայի վրա հարձակման մը ծրագրին.— իշխան Պրոզորովսկին, Քեղակ, Կուտուզով, Հարտինգ, Միլորագովիչ գորավարները, Բուրբելի ռուս հյուպատոս Քիրիբոն, Մանուկ բեյ և Ահմեդ էֆենդի¹⁰:

Հարձակման ծրագիրը սակայն վիժեցավ, միմիայն շնորհիվ Վալահիո գանձատան վարիչ Ֆիրիպեակուի կնոջ, որ Միլորագովիչի սիրուհին էր և որուն բնակարանը կապերն ռուս զորավարը: Անկէ էր որ ֆրանսացիները իմացան դազտնի ծրագիրը և հաղորդեցին որու որ պետք էր¹¹:

Այնպես որ թև 1809 մարտ 24-ին ռուսներ գրավեցին Սլորոպիան, Զուրջովան կղիմանար:

Ահմեդ էֆենդի բնելու ալլև ուշիւ շունըր Ռուսուլուի մեջ Ըրած էր արդեն ան իր կարելին: Տակավ կորսնցուցած էր բովանդակ հողը իր ոտքերու: տակի իր թշնամիները զորացած էին, և սկսած կացութիան տեր դառնալ Դանուբի: Բովանդակ շրջանին մեջ Պահր հասած էր որպեսզի ան կրիւս ապաստան ուզէ ռուսերեն, իր անմիջական զորձակիցներուն հետ մեկտեղ: Իրավ ալ՝ 1809 մարտ 13/25-ին Դանուբը կանցնին և հակողութիան տակ Ֆայասթոբա կփոխադրվին նախկին կապուտան-փաշա Ռամիլ՝ Ռուսուլուի այսն Քյոսե-Քեհչա Ահմեդ էֆենդի. Թրքոնվայի այսն Մեհմեդ Մեմիշ աղա, կապուտան-փաշայի արկղակայր՝ Ինջե բեյ, 100-ի շափ թուրքերու հետ մեկտեղ: Երեք օր հետո անոնք Բուխարեստ կհասնին: Զորս պաշտոնատարները կհյուրընկալվեն զանազան բնակարաններու մեջ, իսկ իրենց հետևորդները կարտոնվեն վիզին մեկնելու¹²:

Տրանսական հյուպատոս կրդու հազիվ 1809 ապրիլ 8-ին Բուխարեստն, կտեղեկագրի Շամպանյի թե սայնտեղ ժամանած են, ռուս պաշտպանութիան ապաստանելու համար, օսմանյան կայսրութիան կերք կարկառուն դեմքերը, կուպուտան փաշա-Ռամիլ, այն որ Պուխըր ոմրակոծեց վերջին հեղափոխութիան առնն, Ինջե բեյ որ այդ միջոցին Դարդանելի մարոցներուն հրամանատարն էր և Ահմեդ էֆենդի՝ որ Մուստաֆա փաշան փոխարինած էր իբրև Թուսուլուի այսն, անոր մեծ վեղիր գտնալուն հետո Պրոզորովսկի հրավիրած է զանոնք ուղղակի Ռուսիա մեկնիլ և անոնք բնդունած են¹³:

Մանուկ բեյ նախըտրելց Բուխարեստ մնալ: Ոչ միայն անոր համար որ վալահիո մայրաքաղաքը ամենեն հարմար վայրն էր ուրկն պիտի կարենար աշակցիլ ռուսերուն՝ թուրքերուն զեմ իրենց շարունակած պատերազմին մեջ, այլև որովհետև աշգպես կթելադրեին իր իսկ շահերը: Ընդարձակ իր կալվածները Բուխարեստի մեջ կամ անոր շուրջն էին, քաղաքին մեջ փառավոր բնակարան ունէր և զեռ նոր այնտեղ էր շինել տվեր համբավավոր իր խանը: Դեռ չէր խոսիր առևտրական իր կապերուն մասին զորս Վալահիո մեջ ունէր:

10 Նույն տեղում, էջ 159.

11 Քեղվիբոնի, Մանուկ բեյ, էջ 16.

12 Նաոմ Ռամիլիխանու, էջ 285—286.

13 Հուրմուզաբի, Գոկուսնետներ, հատոր 16-րդ, էջ 840.

երկրին ազատներնուն հետ կապված իր մենաշնորհին մասին, ինչպես և ի մասին բոյերական տիրազօսին զոր ստացեր էր երկրին իշխաններն:

Եւ ահա, 1809 օգոստոս 21 իր տշրերը կփակեր իշխան Պրոզորովսկի, ու պահ մը անոր կհաջորդեր զորավար Բագրատին: Համակրությունը զոր ծնունի սպորապետին մոտ վայելած էր Մանուկ բեյ, ավելի շեշտվեցավ Բագրատինի օրով որ Մշայրենքը վրացի, Հայամերձ ի բնուստ, իրը հայրենակից իւր համարեալ զՄանուկ Պէյ՝ եղբայրարար սիրով ընկալու զնա, և կապեցան ընդ միմեանս սերտի մտերմութեամբ¹⁴:

4

Մանուկ բեյի կապերը Դանուբն անդին

Հակառակ որ նոր մարդիկ եկած էին Բ. Դրան մեջ՝ թուրք պետության դուրսը և արդեն Ռուսչուկ անցած էր այդ նոր մարդոց իշխանության տակ և հակառակ նաև այն բանին, որ Մանուկ բեյ ինք ևս խույս էր տված Ռուսչուկեն ու եկած էր ապաստանիլ Բուխարեստ՝ ուր տեր ու տիրական էին ռուս բանակները, այնուամենայնիվ այն կապերը բուրբովին շէր խզած Դանուբի հանդիպակաց փոխ հետ:

Ավելի օհիշա՝ թուրքերը իրենք էին որ կշարունակէին կարիք ունենալ Մանուկ բեյի, մանավանդ ամեն անգամ երբ անհրաժեշտ ըլլային անոր բարեխոսությունները ռուսերուն մոտ:

Դանուբյան շրջանի թուրք պաշտոնատարները հաճախ էին դիմեր Մանուկ բեյի միջնորդության զեռ Բայրաքթարի օրով: Մանուկ բեյի արխիվին մեծ բազմամթիվ փաստաթուղթեր կան՝ ինչպես անոր կողմն թուրքերուն եղած նյութական օժանդակություններու, նույնպես անոր կատարած միջամտություններուն մասին:

Այսպես՝ Սիլիստրիի մյուսիսեյլիմ էսսեիդ Մեհմեդ 1808 մարտ 13-ին կխնդրեր Մանուկ բեյին միջամտել ռուս զինվորական իշխանությանց մոտ Հեյներ անուն թուրք ազգական մը ազատման համար¹⁵:

Ուրիշ թուրք պաշտոնատար մը, էրուրքը, 1808 նոյեմբեր 1-ին Մանուկ բեյին կզորեր իսարչայի մոտ ռուս զինվորական շարժումներուն մասին և անոր օժանդակությունը կխնդրեր Բենդերի նախկին Մուհաֆիդ Հասան փաշայի համար¹⁶:

Բայրաքթարի կուսակիցներուն տարտղնումեն ետքն ալ Մանուկ բեյ շարունակեց իր հմայքը պահել Դանուբն անդին, և իր կապերը երբեմնի իր բարեկամներուն հետ: Ռուսչուկի այսին Բոշնակ Արզուլան, որ հաջորդը էր Ահմեդ էֆենդիի, 1810 մայիս 1-ին կխնդրեր Մանուկ բեյին 20 հազար օխա յուղ զրկել իրեն և նաև ազ¹⁷:

1810 հուլիս 28-ին Մեհմեդ Սիբուրի նամակով մը կխնդրեր Մանուկ բե-

14 Մսերյան, էջ 197:

15 Բուխարեստ քաղաքի պատմության թանգարանի արխիվ, № 26391:

16 Անդ. № 26394:

17 Անդ. № 26417:

յլն միջամտել առա իշխանութեանց մտտ ի նպաստ Թուրքութեանն վերցված րանի մը աղջիկներու¹⁸։

Քաղաքնորի նախկին թուրք հրամանատար Իրաճիմ 1810 հուլիս 8-ին Լճանուկ բնյի տեղեկութիւններն կհաղորդէր այդ շրջանին մէջ մղված կռիվներուն մասին և զրամական օգնութիւն կհանդերձ Մանուկենն¹⁹։

Մանուկ բնյի պահած սուլի ազդեցութիւնը թուրքերուն վրա չէր կրնար յմտահոգել ֆրանսացիները՝ որոնք պահ մը խանգավառվել էին 1808 նոյեմբերի Պոլսո ներկրական ղեպորբերն հետո, և հուսացեր որ Քաղկաններու մէջ այլևս իրենց հեղինակութենէն կզրկվին Քայրաթթարի Լըրեմնի կուսակից-նէրը, և անոնց կարգին նաև Մանուկ Բնյ, և այսպիսով առսերը կզրկվին հենարաններ ունենալն թրքական ճակատի վրա։

Ըրդու, ֆրանսական հրուսատուք, 1809 ղեկտեմբեր 30-ին Բուխարեստեն կտեղեկագործ արտաքին գործերու նախարար Շամպայնիի թև սուրբ որ առաջ Թուստուկեն խիստ զաղտնի հոն ժամանած են Լըկու անձեր և օթևտնած Մանուկ անուն շատ հարուստ հայուն բով, նախապես զանձապետը Մուստաֆա փաշային որուն շնորհիւ ընդունած էր զբաղձան-իշխանի տիտղոսը և որուն մահվանն հետո եկած ասպատանած էր Բուխարեստ՝ մեծ հարգանք վալելելով առսերուն մտու Երկու անձերն մեկը զրկված է Ռեխ էֆենտիին, և մյուսը մեծ վեպիրին զբաղձան Մորուզի կողմն, իշխան Քաղաթտինին ուղղված գիրերով, Հաջողեցա իմանալ որ մեծ վեպիրն ու Ռեխ էֆենդիին կպատասխանեն իշխան Քաղաթտինի կողմն եղած առաջարկներուն և որ Մանուկ բնյ իրիչնորդ է առա և թուրք բանակներու միջև։ Կանգիտանամ այդ առաջարկներու պարունակութիւնը, բայց Բ. Գուռը կպատասխան անոր թև պիտի համաձայնի Լթն Թուսիա պարպել իշխանապետութիւնները։ Ինձ կհավաստեն թև այդ սյարագային Բ. Գուռը հոժար է ձամբել անղիական ղեսպանը։ Անհամբերութեամբ կսպասվի Քաղաթտինի պատասխանին։ Բոլոր աստեր տեպի կուսենան մեծ զաղտնապահութեան մէջ, բայց ես հաջողեցա իմանալ ղիվանին պաշտոնյաներն մեկնեն, որ շատ կսիրեն մեր աղբը»²⁰։

Նվ սակայն այս անգամ ևս հօդս պիտի ցնդին նապոլեոնի գործակալներուն հույները։

5.

Կամենցկին և իր հազարանակները

Իմանուկ բնյ իր ազդեցութիւնը պահեց զոր. Կամենցկիի օրով ալ որ առաջ րանակներուն սպարապետ կարգված էր Պրոտորովսկիի տեղ 1810 թվականի հունվարին։

«Սա բանզի այր բարձրամիտ էր և անձնհամ», և ովիս և անհամբոյր և դժվարամատոց» ղեպի Երկրին բոյարները՝ որոնցմն մեկն ալ Մանուկ բնյ ինքն էր, այս վերջինը շուգեց անձամբ անոր այցի երթալ իսկույն, այլ Պապիկը զրկեց զանազան նվերներով։ Կամենցկի սակայն շերձ փախագ հայտնած ըլլալով իր հետ տեսակցիլ՝ Մանուկ բնյ այցելեց անոր, այցելութիւն որուն ընթացքին 2—3 ժամ տեսակցեցան անոնք և զոր. Կամենցկի փոխա-

¹⁸ Անդ, № 26501։

¹⁹ Անդ, № 26480։

²⁰ Հուրմուգաբի, Գոկումենտներ, հատոր 16, էջ 643։

մատր դրկեց անոր ընտանիքը զոր նույնպես ազատած էր գերութենէն և որուն ևս աջակցեցեցալ զրամասպես:

Անոնք որ թուրքերու մոտ կղանային, միասին կտանեին նաև Մանուկ բնյի բարերարութեանց յուրերը:

Ինչպէս զորս Կամենցկի Պապիկը զրկեց զոր. Զասի մոտ, որ պաշարած էր Ռուսչուկն ու Զուրջովանի Ռուսչուկը կպաշտպանենք Բոշնակ Աբգովլուս՝ թովն ունենալով Զարսեցի Ալլո փաշան, իսկ Զուրջովան՝ Ալդըն փաշա: Զակառակ իր բոլոր փորձերուն՝ Զաս չհաջողեցալ անձնատուր ընել Բոշնակը, ոչ ալ Ռուսչուկը գրավել զննքով:

Ռուսչուկի հանձնման համար միջնորդելու պաշտոնը վիճակեցալ Մանուկ բնյի:

Յիշխարել, Բուխարեստի ավատրիական հյուպատոսը, 1810 հունիս 20-ին կհօղորդէր Մեղերնիխին թե Մանուկ բնյ խորհուրդ տված է Բոշնակ աղա-յին ռուսերուն հանձնել Ռուսչուկը՝ խնայելու համար բաղաբին ավերման²⁴:

Ուրիշ աղբյուրի ալ գիտենք թե Բոշնակ աղա ինքն էր որ Մանուկ բնյի միջնորդութիւնը պահանջեց ռուս հրամանատարեն:

Լիշեցնենք որ Ռուսչուկի առջև մղված կոնֆլիկտն, 150 զինվորներու և երեք հայ թահաններու հետ մեկտեղ, կմասնակցեր նաև Գրիգոր Աբբ. Զաքարյան Ակկերմանցի որ նույն իսկ վիրավորվեր էր կոնֆլիկտն ընթացքին և որ թաղաք կմտներ հաղթական զորքին հետ մեկտեղ, հոն հանդիպելու համար Մանուկ բնյին որ Ռուսչուկ էր եկեր որպեսզի թուրքերն համոզե առանց կովի հանձնելու բաղաբը:

Մանուկ բնյ նույն ճարտարութիւնը ունեցալ Շիշթովի և Նիկողոյի անձնատուլութեանց առթիվ ալ երբ հաջողեցալ հիշյալ զույգ բերդերը հանձնել տալ առանց արյունահեղութեան, նույն ամբողջներու հրամանատարները իրենք էին, որ հետեւելով Բոշնակ աղայի օրինակին, Մանուկի ներկայութիւնը կպահանջեին անձնատուր ըլլալու համար:

Դանուրի շրջանի թուրքերը Մանուկ բնյին երախտապարտ մնալու պատճառներ ունեցան հետագային ալ:

Յիշխարել 1811 ապրիլ 3-ին Բուխարեստն կգրե Մեղերնիխին, թե հետևանք տալով Մանուկ բնյի թելադրութեան՝ զորավար Լանժրոնն էտ առաջ Սիլիստրեն և Նիկողոյիսը բանակելու իր որոշումը²⁵:

7.

Յրանսա և իր շղայնությունը

1806—1812-ի ռուսիստուրք պատերազմին վերջին շրջանը կզուգադիպի արդեն այն տարիներուն, երբ նապոլեոն կծրագրեր իր մեծ արշավանքը Ռուսիո վրա: Ոչ որ ուրեմն իրեն շափ շահագրգռված էր որպեսզի տեսն զնո կրկար թուրքառուս թշնամութիւնները: Եվ բնական էր որ Դանուրեան շրջանի իր գործակալները զժկամութեամբ տեսնեին Մանուկ բնյը դարձյալ ասպարեցի վրա, այս անգամ արդեն տարբեր դերի միջ:

²⁴ Զուրջովախի. Գոհումենտներ. հատոր 19-րդ. մաս 11, էջ 648:
²⁵ Անգ, էջ 714

Յրանսական ծագումը զոր ունեւր ռուս բանակի զորավարներն Լանժերոն ապահովաբար դեր կատարած է այն չկամ արտահայտութիանց մեջ զորս կնիւրեր Մանուկ բեյին իր օրագրութիւնը գրի առած ստեղծ:

Այսպէս, զորավար Լանժերոն պատերազմական իր օրագրին մեջ 1809 մարտին Քշնամական կերպով կարտահայտի Մանուկ բեյի մասին, իբրև թէ ան իր հետ միասին վերջուցած ըլլա, Պոլսէն փախած միջոցին, հանգուցյալ Բայրաքթարին գույրերն ալ, և կրսե թէ ի զուր է շնորհւած Ս. Վլասգիմիրի Գ. կարգը նման արկածախնդրի մը և լրտեսի մը, և Ռուսուկի առման մասին խոսելու ստեղծ ևս իր կարծիքը աննպաստ է ի մասին Մանուկ բեյի և Քշուս-Քեհչա Ահմեդ էֆենդիի²⁶:

Ավելի հետո, 1809 հուլիսին, Լանժերոն իր օրագրին մեջ կծու ակնարկութիւններ կրնէ Մանուկ բեյի մասին, ըսելով որ ան Քուրքիտ կողմէն նշտված ածան գիներով արմտիք կզնի Վալահիո մեջ և կվաճառե Քուղարիո մեջ բառապատիկ գինով²⁷:

Հաջորդ ամսուն իր նույն օրագրին մեջ կզրն թէ վստահութիւն չունի Մանուկ բեյի խողովակով ռուս հրամանատարութիան հաղորդված լուրերուն վրա, թէն ստիպված է այնուամենայնիվ գործածել դայն²⁸:

Չոր. Լանժերոն իր օրագրութիւն մեջ Գրիգոր Աքր. Չաբարյանի մասնակցութիւնը Ռուսուկի գրավման համար մղված կռիվներուն,— որոնց ընթացքին նույնիսկ պիտի վիրավորվեր բարձրաստիճան հայ հոգևորականը՝ պարզևատրելու համար հետագային իր ցույց տված բաշտիւնն առթիւ,— այնուամենայնիվ կրսե թէ «Յուրբերու ղեմ մղված պատերազմի մը մեջ պետք է կարելի եղածին շափ բիշ գործածել, նույն իսկ մեր գիրբերուն մտանցնել, հայեր, հույներ և վալահներ»²⁹:

Ուշագրավ է որ Լանժերոն իր պատերազմական օրագրին մեջ չի խնայեր նույն իսկ Կուտուլովին՝ որուն հանդեպ անբարյացակամ տողեր կնիւրէ: Սովետական հեղինակ մը որ զբաղած է Յուրբերուն ղեմ ռուս բանակներու ջախջախիշ հաղթանակներով Կուտուլովի հրամանարն տակ, կանգրագրուանա Լանժերոնի շարմախտ տողերուն, դանոնը նոր փաստ մը սեպելով այն շարաշուր ղերին համար զոր ռուս բանակի շարբերուն մեջ ծառայող օտարներ ունեցան ռուս մեծ զորապետին ղեմ, նույնիսկ իրենց վերագրելով, ինչպես կրնէ Լանժերոն, պատիվը անոր տարած այս կամ այն հաղթանակին³⁰:

Լանժերոնի սույն աննպաստ վերաբերումը Մանուկի հանդեպ՝ անով մահալանդ աչքի կզարնէ որ ան հիմնովին կհակասե բոլոր մյուս ռուս զորավարներու բարյացակամ և զբաղատալից արտահայտութիւններուն նույն այդ Մանուկ բեյին նկատմամբ:

Սախ ունիւր Պրոզոպրովսկիի 1808 ղեկտ. 18 թվակիր ղնահատական գիրք Մանուկ բեյի մասին, այն արտոնութիւնն առթիւ որ անոր ընտանիքին կտրվի Քուխարեստ զալ հաստատվելու³¹:

Նույնքան զբաղատալից է զոր. Բագրատիոնի կողմէն 1809 սեպտեմբեր

26 Հուրմուգալի. Գոկոմենտներ, հավելված 3, էջ 156—159:

27 Անդ, էջ 185:

28 Անդ, էջ 198:

29 Հուրմուգալի. Գոկոմենտներ, հավելված Ա. 3-րդ մաս, էջ 278:

30 Ս. А. Жуков. Разгром турецкой армии в 1811 г., Москва, 1952, стр. 53—54.

31 ԲՔԳԹԱ, № 65336:

13-ին Մանուկ բեյին արված վկայականը³², որու շահերու հանդեպ անոր ցույց տված անձեղներ ջանքերուն մասին:

Այդ վկայականն երկու օր էտք, 1809 սեպտ. 15-ին, Բուխարեստի ռուս հյուպատոս Լուքա Քիրբբու, իշխան Պրոզորովսկիի հրահանգով նոր վկայական մը կհանձնեն Մանուկ բեյի ի մասին անոր մատուցած ծառայութիւններուն³³:

Չոր. Միլորազովիչ, իր կարգին, 1810 հունվար 25-ին վկայական մը կստորագրեն Մանուկ բեյի շուքլած ձիգերուն մասին, և այդ առթիւ հրահանգ կուտա որու իշխանութիւններուն՝ ամեն պաշտպանութիւն ընծայել անոր և անոր ընտանիքին³⁴:

1810 մարտ 12-ին զորավար Բագրատիոն ուրիշ վկայական մը կհանձնեն Մանուկ բեյին՝ միշտ զրվատելով անոր մատուցած ծառայութիւնները և նույն օրն իսկ, ուրիշ պաշտոնագրով մը կվավերացնեն Վալահիո զիվանին կողմէ 1809 հունիս 9-ին Մանուկ բեյի արված առանձնաշնորհումները ի մասին անոր ունեցած կալվածներուն իշխանապետութեան մէջ³⁵:

Նույն տարվան սեպտեմբեր 4-ին զորավար կոմս Կամենցկի շնորհակալութիւն կհայտնեն Մանուկ բեյի՝ այն ծառայութիւններուն համար զորս ան մատուցած է որու բանակներուն³⁶:

Դեռ շինք խոսիք զնահատանքի այն արտահայտութիւններուն մասին, որոնց արժանացուց որու արբունիքը Մանուկ բեյը զեռ 1810-ին:

Արդարև նույն տարվան մայիս 20-ին էր որ Ալեքսանդր Ա. ցարը Մանուկ բեյի կշնորհեր Ս. Վլադիմիրի աստիճանին Գ. կարգը³⁷:

Ավելի հետո, 1814 հոկտ. 3-ին, ցարական ուրազով մը Մանուկ բեյի պիտի շնորհվեր «Պետական իրական խորհրդական» տիտղոսը, Ալեքսանդր Ա. ցարին կողմէ ընդունված օրն իսկ՝ Վիեննայի մէջ:

Յրանսակոտ գործակալներու, և անոնց կողքին զորավար Լանժերոնի անբարյացակամ արտահայտութիւնները իրենց արձագանքը բերին մինչև մեր օրերուն: Անոնք պատճառ եղան որ Մանուկ բեյը սխալ ճանչցվի հետազատ սերունդներին, և ան հիշատակվի պարդապես իբրև հասարակ կապատաղա սերունդներին, և ան հիշատակվի պարդապես իբրև հասարակ կապալառու մը և սեղանավոր մը, և շատելը զայն հիշեն այսօր... Բուխարեստի իր համրավաժող խանին հետ:

Պատմութիւնը, սակայն, իր անակնկալները ունի ինքն ալ: Լուչային կհասնէ հանկարծ զեպքեր՝ որոնց վրա իջած էր մոռացութեան թանձր մշուշը:

Արխիվային նյութերը՝ որոնք հայտնվեցան վերջին տասնամյակներումն՝ ստիպեցին որ պատմութիւնը իր մեղքը փայլե...

32 Собрание актов, III, 1838, стр. 354.

33 ԼԿՊԱ, ֆոնդ 380, ուց. 5, գործ 7, Թ. 191.

34 ԲՔՊՔԱ, № 35072:

35 ԲՔՊՔԱ, № 35124:

36 ԲՔՊՔԱ, № 35068:

37 ԼԿՊԱ, ֆոնդ 880, ց. 5, գործ 7, Թ. 82:

Կուտուզովի ժամանումն Լախ

Քուրբերը, սակայն կարիք ունենի որ առաջ հաշտվելու ուստի հետ: 1811 տարվան սկիզբը անոնք Մանուկ բեյի կղիմեն զորձյալ ուսերուն մաս նոր միջնորդութեան մը համար:

Նույն տարվան հունվար 26-ին Բուխարեստ կհասնի թուրք պատվիրակ մը որ ի միջի ալոց Մանուկ բեյի կրերն Ռեխ-էֆենդիին ընդարձակ մեկ գիրը որ Մանուկ բեյն կխնդրել միջնորդել ուսերուն մաս հաշտութեան մը համար, զգացնելով սակայն կանխազ թե պիտի չհամակերպին հողային գիշումներու:

Պարտված էին թուրքերը, բայց ոչ ջախջախված: Դեռ քաջութուն կղզային անոնք պատվով դուրս գալ արդեն հինգ տարի տեղոջ այս պատերազմն: Զանոնք համակերպութեան ստիպելու համար՝ նոր հարված մը դեռ անհրաժեշտ էր:

Զորավար Կուտուզովի անվանումը 1811 մարտին իրր ուսս զորքերու հրամանատար՝ զորավար Կամենցկիի տեղ, կուգար նոր թվական մը բանալու ըլլա պատերազմական գործողութեանց, ըլլա հաշտութեան բանակցութեանց մեջ, նոր թափ մը տալով անոնց:

Կուտուզով առաջին անգամ չէ որ կու գար այս շրջանները: Ան մաս կը առնր ուսեթուրք նախկին պատերազմին ալ, և ինք կը շահեր երեք մեծ հաղթանակներ, 1790 ղեկտեմբերին Իսմայիլի, 1791 հունիսին Բարադաղի և ամիս մը հետո Մըլիխի մեջ: Մասնակցեք էր նաև սույն պատերազմին՝ 1807 մարտին զրկվելով Մուղովա, բայց իշխան Պրոզորովսկիի հետ իր տարակարծութեանց պատճառով Վիլնո փոխազրկել էր հաջորդ տարին: Հիմա, 1811 մարտին, կրկին կուգար Դանուբյան ռազմարեմք այս անգամ արդեն իրրն ընդհանուր հրամանատար ուսս բանակներուն:

Կուտուզով ևս առաջին օրնն կարիք ունեցավ Մանուկ բեյի, ինչպես ունեցեր էին զինք նախորդող բոլոր ուսս հրամանատարները: Մանուկ բեյի օժանդակութունը չէր կայանար միայն իր և իր մարդոց գործոն ղերին մեջ զինվորական գործողութեանց ընթացքին, այլ անոր աջակցութեան մեջ ալ թուրքերուն հետ հաշտութեան բանակցութեանց առնն:

Յիւլյաբեկ, Բուխարեստի ավտորիական հյուպատոսը, 1811 մայիս 8-ին կտեղեկագրեր իր կառավարութեան՝ խորհուրդներուն մասին զորս Մանուկ բեյ կուտա զորավար Կուտուզովի թուրքերուն հետ բանակցութեանց մեջ անոր բռնելիք գիրքին մասին³⁸:

Այդ բանակցութեանները արդարև պիտի սկսեն շուտով:

Անոնք 1811 հունիսին սկիզբ առին Բուխարեստի մեջ մեկ կողմն Լամիդ էֆենդիի և մյուս կողմն Պուստ ուսս ղեսպան Իտալինսկիի միջև³⁹, առանց սակայն անմիջական արդյունք մը տալու:

Այնպես որ 1811 օգոստոս 17-ին ուսեթուրք բանակցութեանները դեռ որեւէ պտուղ տված չէին⁴⁰:

38 Լուսուզաֆի, Դոկումենտներ, հատոր 19, մաս 2, էջ 719:

39 Լուսուզաֆի, Դոկումենտներ, հատոր Բ, հավելված Ա, էջ 614:

40 Անոյ, էջ 620:

Կառուցողով կ'հնչանեն թե այդ մասին պիտի հաղորդի ցտրին, հայտարարելով սակայն մեծ վեղիբրին թե պիտի համարձակի նման առաջարկ մը ներկայացնել իր վեհապետին բայց միայն այն պարագային, եթե Այբուդիայի թուրք բանակը անձնատուր ըլլաւ:

1811 զեկտեմբեր 7-ին մեծ վեղիբր կ'համակերպի նվաստացուցիչ այս առաջարկին ալ: Այբուդիայի թուրք զինվորները, որոնք 36 հազարին 12 հազարի իջած էին՝ կ'հանձնեն իրենց թնդանոթներն ու զենքները:

Գեկտեմբեր 11-ին թուրք լիպպորները կ'ժամանեն Բուխարեստ:

3.

Մանուկ բնյ իրև միշնոդ բանակցութուններուն

Առ ահա կրկին ասպարկզի վրա է Մանուկ բնյ:

Ինչպես հայտնի է՝ Բուխարեստի հաշտութեան բանակցութեանց մեջ ռուս պատվիրակութեան անդամներն էին Անդրե Իտալինսկի, Պոլսո ռուսական ղեկավար, զորավար Ժան Սարանին, և Պոլսո ռուս ղեկավանատան զխաւոր թարգման Ժողեֆ Ֆոնդոն, իսկ թուրքիս պատվիրակներն էին Սեյիդ Մեհմեդ Գալիբ, Սրվան Ռեխա էֆենդին, Ասիական կողմի կազաուկեր Մուֆրի զադե Բրահիմ Սելիմ էֆենդին, և ենիշերիններու զխաւորներն Աբդուլ Համիդ էֆենդին, զխաւոր խորհրդական ունենալով Գիմիտարաբի Մորուզին, ավագ զբազումներ Բ. Գրան, որ ծագումով հույն էր:

Արդ, ոչինչ ավելի ձեռնտու էր ռուսերուն համար, քան մտերիմ կապեր գործ Մանուկ բնյ ունեթ Բուխարեստ ժամանող հաշտութեան թուրք պատվիրակութեան հետ:

Հիրավի՝ Սեյիդ Մեհմեդ Գալիբ բնյ, որ Յաշի ձախողած բանակցութեանց ընթացքին թուրք պատվիրակն էր եղեր և որ թուրք պատվիրակութեան պետը կ'մնար սույն բանակցութեանց ընթացքին ևս՝ մեկն էր Մանուկ բնյի ամենամտակի թուրք բարեկամներէն:

Ան իրեն հետ մեկտեղ մաս էր կազմեր Ռուսչուկի մեջ Բայրաթթար Մուստաֆա փաշայի շուրջ հավաքված խմբակին և մասնակցեր էր Բայրաթթարի կառավարութեան ալ: Ենիշերինները Բայրաթթարի բոլոր գործակիցները իրենց զիրբերեն բշկու առեն շէին հաջողեր զպիլ Սեյիդ Մեհմեդ Գալիբ բնյին և Մահմուդ Բ. Սուլթանը զայն պահեր էր Ռեխա էֆենդիի պաշտոնին վրա, և այդ անկամանքով ալ ան կու գար հիմա հաշտութեան թուրք պատվիրակութեանը զխաւորելու:

Մանուկ բնյի և Գալիբ բնյի մտերմական կապերը այնպիսին էին, որ թուրքիս Ռեխա էֆենդին շէր բաշվեր նույնիսկ զբանական օգնութեանը զիմնու իր հայ բարեկամեն: Մանուկ բնյի արխիվին մեջ պահված են 1809 մարտ 12 և 13 թվակիր անոր զույգ նամակները որոնցով զանազան զումարներ փոխ ուղած է ան՝ ռուսերու հետ բանակցութեան համար Յաշ հասնելուն առթիվ⁴²:

Գալիբ բնյ նման փոխառութիւններու համար Մանուկ բնյի զիմած է

42 Բուխարեստ քաղաքի պատմութեան թանգարանի արխիվ, № 26230 և 26233:

մտերիմ նամակին մեջ թե Ռուսիո կայսրը հրամայած էր կուտուցովին թուրք պատվիրակության հետ անհրաժեշտ շփումները ունենալ իր՝ Մանուկ բեյի միջոցով. «նայ կրս հրամայեալ էր թե նայ իմոյ միշնորթութեամբ խոսեցի պատասխաններն (թուրքաց) մեծ զեապանին. զի այս բանըս արշիններն խիստ գաղտնի էր. միայն թուրքիոյ մեծ թեսպանն և Գուլիստովն և ծառայք, և այլ ֆոնթոներն զի Հայ էր ի մէջ բրինձ Գուտուցովի և իմոյ թարգման. այլ ուրիշ մեկ մարթ չի գիտեր ոչ թուրքիոյ մէկայլ երկու թեսպանն և ոչ նոցա: Թարգման Մարտզըն և ոչ բուստաց (զեսպանն), ոչ (ի) թալինցրին»⁴⁵:

Բուխարեստի հաշտութեան բանակցութեանց և Մանուկ բեյի կատարած զերին մասին բարերախտարար թանկատիկն վկայութիւններն կ'մնան ըլլա ուս-սակիան արխիվներու վաղեմութեան, ըլլա ստար հյուպատոսներու տն-դեկագիրներուն մեջ. առանց հիշելու փաստանյութերը, որ Բուխարեստի պատմութեան թանգարանի իր սեփական արխիվին մեջ կ'պահպանէր: Բուխարէ միաձայն են վկայելու բացառիկ այն զերին մասին՝ զոր Մանուկ բեյ խաղաց սուս և թուրք սույն բանակցութեանց ընթացքին, զեր որ զբարախտարար մուտ-ցութեան տրված է պատմական հետազոտութեանց մեջ:

Հյուպատոսական այն տեղեկագիրներուն մեջ զորս Բուխարեստի և Յա-լի ստար հյուպատոսները զրկած են իրենց կառավարութեանց՝ զանոնք տեղ-յակ պահելու համար ուսման երկիրներու մեջ տեղի ունեցող անցուղարձերուն, բացառիկ շահեկանութեան կենդանացնեն Բուխարեստի ավստորիական հյու-պատոս Ֆելչշարելի հրած տեղեկագիրներ Մետերնիխին: Եթե ֆրանսական հյուպատոսները տարված էին առաջելու պատերազմը երկարաձգված տեսնելու մտահոգութեամբ, Ավստրիո գործակալները նույնքան մտոնն կ'են-տեղին Բուխարեստի անցքերուն, մզված տարբեր շահագրգռութենէ: Այդ նպատակով ալ անոնք ավելի մտոնն շփում ունենին թուրք պատվիրակության շրջանակներուն հետ, և մասնավանդ սույն պատվիրակութեան ավագ խորհրդ-ական իշխան Մորուզիի՝ որուն հետ մտերիմ խոսակցութիւններ ալ կու-նենային: Ֆելչշարելի իր 1812 ապրիլ 9 տեղեկագրով Մետերնիխին կ'հաղորդե, յօրինակ անոր հետ իր մեկ գաղտնի տեսակցութիւնը ուր խոսքի նյութ եղած է Մուլդովա մուտքը ավստրիական բանակի մը, ինչ որ պիտի ստիպեր ուսու-րը Վալահիան պարպել և հնարավորութիւն տալ թուրքերուն Գանուրը անցնելու⁴⁶:

Դեպքերը այլապէս պիտի զարգանային, և այս ու նոնք ծրագրիներ պիտի ծառայէին պատմական արձանագրութեանց էջերը զարգարելու համար միայն:

10.

Որպէսզի կ'ենթի Բուխարեստի դաշնագիրը

Ռուս և թուրք շփումները պիտի աշխուժանային 1812 տարվան հետ: Մեկ կողմն եկատնիքի կ'զառնար որոշ աճապարանք մը երկուստեք, որով-հետեւ երկու կողմերն ալ կարիք ունենին օր առաջ վերջացած տեսնելու թը-

⁴⁵ Լիցիւ, ֆոնդ 880, ց. 5, գործ 7, թղ. 214:

⁴⁶ Հուլիսուլաքի, Գոկումենտներ, 20-րդ, 1, թ. 12—13:

1925-ին հաշտության դաշնագիրը կերվեցավ վերջնապես, և հունիսի մեջ էր միայն որ ան կրամնվեր ուսման հոգերեն:

Քուխարեստի դաշնագիրը 1812 հունիս 23-ին կվավերացվեր Վիլնայի մեջ, և հաջորդ օրը նապոլեոն կձեռնարկեր իր մեծ զորհին քնդդեմ Ռուսիո:

Մանուկ բեյ կրնար հօտարտ բլլալ արագացուցած բլլալուն համար ուսուեկուրը հաշտության սույն դաշնագրին կնրումը, և այս՝ և մեծ սրտմտութուն նապոլեոնի և իր մեծ ու փոքր զործակալներուն, որոնք իրենց բոլոր միջոցներով աշխատեը էին երկարաձգելու թշնամությանները, ռուս զորքերը դրողած պահելու համար Գնաուրյան սույն շրջանին մեջ ռուս պետությանը զեմ նապոլեոնի ծրագրած մեծ արշավանքին ասուն:

Մանուկ բեյ զեռ շորս տարի ափելի առաջ կուզեր իրականացնել հասկացողություն մը երկու պատերազմի կողմերուն միջև, եթե պարագաները թույլ տված բլլային իրեն:

Այն վկայականին մեջ զոր իշխան Պրոգորովսկի իր մեռնելուն առաջ հրահանգած էր հանձնել Մանուկ բեյի՝ Քուխարեստի ռուս հյուպատոս Լուրս Բիրբոր, 1809 սեպտեմբեր 15-ին, հիշատակելու առթիվ Մանուկ բեյի մատուցած ալլազան ծառայությունները ռուս զենքերու հաջողության համար, կվկայեր ի միջի ալլոց թե Մանուկ բեյ օգիտցած է հանգուցլալ Քալարթթար Ռուստաֆա պաշան բարչացական տրամադրության մեջ պահել զեպի Ռուսաստանը, տրամադրություն, որ պիտի առաջնորդեր Ելու կողմին համաշալ զհեցուցիչ հաշտության մը եթե մահը, Պոլսո վերջին բմրոսութան րնթացքին, խլած շլլար ալս խաղաղասեր մեծ վեզիրը⁵²:

Եթե հասկացողության փորձերը վիժեցան այն ասուն, Մանուկ բեյի կամրեն բոլորովին անկախ պայմաններու երեսն, շորս տարի հետո անոնք կիրականանային՝ ի հեճուկս նապոլեոնի և իր զործակալներուն բոլոր հույսերուն և սաղրանքներուն, իսկ սույն հաջողության մեջ Մանուկ բեյ իր վճռական զերն ուներ դարձլալ:

Մտերմական այն նամակին մեջ զոր Մանուկ բեյ հաշտության կնրումեն ափելի բան տարի մը հետո այն է 1813 օգոստոս 6-ին Սիրիուն պիտի զրկեր Պեսեբբուրդ իշխան Հովակիմ Լաղարյանին, կթվե խոշընդոտները, որոնց պեար եղավ զիմադրավել հաշտությունը ապահովելու համար պատերազմի կողմերուն միջև, Ռուսաստանի այնքան նպատավոր պայմաններու մեջ, և այդ՝ հակառակ սաղրանքներուն աշարայալխտ նափոխիոնի որ այնպես մեծ յոյս և սիրտ տվիալ էր թուրքաց...⁵³:

II.

Աստաբելու համար իր ձեռնդավալիքն

Քուխարեստի դաշնագիրը նոր հանգրվան մը կրանար Մանուկ բեյի կյանրին մեջ:

Անոր հետագա գործունեությունը ամբողջապես կկապեր ռուս շահերու հետ:

52 ԱՊՊԱ, ֆոնդ 880, ց. 5, դոմ 7, թղ. 191—195:

53 Անգ, թղ. 212:

ել սակայն բոլորովին ալ չէր խզած ան իր կապերը թուրքերուն հետ, մանավանդ անոնց՝ որոնց հետ անցեր էր իր ամբողջ կյանքը Գանուբի ակերուն վրա և որոնք, փոխադարձաբար, զեռ իրեն կապված կղզային իրենք զիրենք:

Հաշտութեան կնքումը անիթ մը եղաւ Մանուկ բեյի՝ իր վեհանձնութեան նոր մէկ ապացուցք տալ թուրքերուն, այս անգամ այն զերիներուն, որոնք պիտի վերադառնային Ռուսիայն և որոնց մէջ ինք ևս բարեկամներ կհաշվելու վերադարձողներուն մէջ էին հայտնի Փեհլիվան փաշան, Իսխիլալը Ահմեդ փաշան, Արաբ փաշան, Չափան օղլու Մեհմեդ փաշան, Մորալը Ալի փաշան, և զեռ ուրիշ բազմաթիւ կարկառուն զեմբեր՝ որոնցմէ ոմանք ծառայեալ էին Բայրաքթարի օրով: Անոնցմէ շատերուն Մանուկ բեյ օգներ էր իրենց գերութեան շրջանին. հիմա, երբ անոնք Բուխարեստ կհասնեին իրենց գերութեան՝ Թուրքիա դառնալու համար, իր հոգածութեան առարկա դարձած բոլորն ալ, ամեն կերպով օգնելով անոնց, Քյոսե-Քեհչա Ահմեդ էֆենդի նիկոլակեա մնացորդ էր՝ վստահութեան շունեկալով Թուրքիո նոր փշխանութեանց վրա, իսկ Ռամիզ փաշա առայժմ կսպասեր Յաշտ:

Երբ Կոստոզով 1811 հուլիս 12-ին կպարպեր Ռուսչուկը հոր ճարակ ընել և հետո գայն, Բոշնակ Աբդուլլահ որ ինք ամիս առաջ, 1810 հոկտեմբեր 5-ին, գայն հանձներ էր ռուսերուն՝ առանց կոիվ մղելու, ինչպես թելադրեր էր իրեն Մանուկ բեյ, կդատնար կրկին Ռուսչուկ վերստանձնելու համար քաղաքին այննութունը, դայն գտաւ հետին ծայր թշվառութեան մէջ, ու ամեն կարգ ու կանոն շրջված այնտեղ հիմնի վայր: Իր առաջին մտածումն եղաւ Ռուսչուկ հրաձիբել Մանուկ բեյը՝ վստահ որ ան միայն կրնա դարման անիլ այս տաժանելի դրութեան: Այս նպատակով ալ քանիցս նամակներ գրեց անոր Մանուկ բեյ ի սկզբան վստահութեան շունեկալ և Ռուսչուկ զրկեց Պապիկը որ շատ սիրալիր կերպով ընդունեց Բոշնակ: Պապիկ հավաստեց վերադարձին թե եղած հրավերը քաղաքին բարիքին համար է միայն: Այնուամենայնիվ, պարագաներու բերմամբ Մանուկ բեյ չկրցաւ շուտով մեկնել: Երբ սակայն 1812 հոկտ. 2-ին ծովակալ Չիչակով ռուս զորքերը բաշեց Բուխարեստն, Մանուկ բեյ որոշեց պատասխանել Բոշնակի հրավերին, և հոկտեմբեր 18-ին մեկնեցաւ թուրք պատվիրակութեան պետին՝ Գալիբ բեյի հետ, որուն ևս գրած էր Բոշնակ Մանուկ բեյը համոզելու Գալիբ 5 օր միայն մնաց Ռուսչուկ և մեկնեցաւ Շումլա մեծ վեղիբին մոտ, իսկ Մանուկ բեյ զեռ ստան մը մնաց հոն և իր խորհուրդներով սատարեց բարեկարգելու քաղաքը ուր ինք ծներ և հրկար ատեն ապրեր էր: Իր թելադրութեամբ էր, որ, օրինակ, Բոշնակ զեղչեց շրջակա գյուղերուն վրա գրված տուրքերը, որոնք կհնչեին բնակչութեանը:

12.

Բ. Գրան մոլեգնութունը

Սիւ ճիշտ այդ օրերուն նոր մոլեգնութեան մը կհամակեր Բ. Գուռը: Ան կսկսեր միջոցներու ձեռնարկել պատուհասելու համար անոնք, որոնք պատրաստեր և նվիրագործեր էին իր նվաստացումը Բուխարեստի մէջ:

54 Մսեյան, էջ 221—222:

55 Մսեյան, էջ 222—225:

Այդ մողկեցութիւնը ան սկսեր էր ցուց տալ, Բայրաթթարի եղբրական վախճանին հետո, բոլոր անոնց զեմ, որոնք գործակցեր էին անոր՝ ըլլա ենիշերիներու տիրապետութիւնը ջախջախելու համար անոր ձեռք առած միջոցներուն ատեն, ըլլա անոր փորձերուն առթիվ ուսերուն հետ հասկացողութեան մը գալու համար:

Ասոնցմէ ոմանք պատուհասվեր էին 1808 նոյեմբերի դեպքերուն վազորդային իսկ, ուրիշներ ենիշերիներու վրեժխնդրութենէն հողոսրած՝ հաջողք էին ուսերուն արտատանիլ, ինչպէս նախկին կապուտան փաշա Մամիզ, Ռուսշուկի այն Բոյսե-Քեհչա Ահմեդ էֆենդին, Թրնովայի այն Մեհմեդ Մամիշ ազան և ուրիշներ, ու կապրեին տարազրութեան մեջ:

Հալածանքն պիտի չազատելին նաև անոնք որ զեր կատարեր էին Բուխարեստի հաշտութեան կերման մեջ: Արդարև զեռ շորցած չէր դաշնագրին տակ զրված սատրապութեանց միւսներ, երբ Բ. Գուլը հետապնդել սկսավ բոլոր անոնք, որոնք աջակցեր էին Թուրքիոյ համար այնքան անկաստողաշնագրի մը կերման, սկսելով նույն իսկ անոնցմէ որոնք Ռուսիոյ հետ մտնողման հր կուսակից էին զեռ Բայրաթթարի օրով: Ընդէն է՝ ան պիտի խնայեր թուրք պատվիրակութեան պետին, Գալիբ բեյի, որ Սուլթանին մասնավոր համակրութիւնը կվայելեր և հետագային մինչև սատրապութեան պիտի բարձրանար. բայց բոլոր մյուսները հալածանքի նշալակ պիտի ըլլային մեյ մեկ կերպ:

Իր շղթայադերձած այս հալածանքին մեջ Բ. Գուլը կուր գործիքնեռ ունեցավ իրեն: Ասոնցմէ էին Բուխարեստի և Յաշի համար իր անվանած նոր իշխանները, մասնավաղ առաջինը անոնցմէ որ Յանբու Կարաջա Վոզան էր և իշխանները, մասնավաղ առաջինը անոնցմէ որ Յանբու Կարաջա Վոզան էր և որ կրկար կատարել պատուհաս մը դառնալու վախճիտ բնակչութեան համար:

Ինչպէս տեսանք՝ Մանուկ բեյ բալական երկար մնացեր էր Ռուսշուկ, որ գնացեր էր Բոշնակ աղայի հրավերով: Այնտեղ էր զեռ երբ 1812 նոյեմբերին Շումլա, մեծ վեպիբին հանդիպելով, Բուխարեստ իր պաշտոնատեղին բերմար վախճիտ նոր իշխանը, Յանբու Կարաջա, որ Թուրքարանն անցնելուն փափարեցավ Մանուկ բեյը տեսնել և անոր հանգիստելուն՝ հազար հալուն փափարեցավ Մանուկ բեյը տեսնել և անոր հանգիստելուն մասին, ակնարկելով վատտիբ տվավ երախտագիտութեան իր զգացումներուն մասին, ակնարկելով Պոլսոյ մեջ մահվան պատիժ իր փրկվելուն՝ Մանուկ բեյի իսկ միջամտութեան շնորհիվ: Մանուկ բեյ վերադարձեր էր Ռուսշուկ, իսկ Կարաջա ուղղակի գացեր էր իր աթոռը գրավել:

Մանուկ բեյ զեռ Ռուսշուկ էր նույնպէս երբ լուր առավ թև Շումլայի մեջ զիսատված է Գիմիտրակն Մորուզին՝ ուսնթուրք գաշնագրի կերման մեջ իր ունեցած զերին համար: Լուրը իրեն հաղորդված էր Պապիկին կողմէ, որ իր կարգին գայն իմացած էր իշխան Կարաջային: Կարաջա Պապիկին խնդրած էր իր տեղեկացնել նաև Մանուկ բեյին և անոր թելագրել որպէսզի զգուշանա Վալիբ բեյին և թղթակցի անոր հետ, ան ևս, ըստ Կարաջայի տեղեկութեան, Բ. Գրան կողմէ գատապարտված ըլլալով մահվան, իրեն պետք ուսերու հետ նվաստացուցիչ այդ հաշտութիւնը կերող թուրք պատվիրակութեան:

Եվ ահա, զեռ Ռուսշուկէն Բուխարեստ շնեկնած, Մանուկ բեյ նամակ կատանար նույն ինքն Գալիբ բեյին, որ իր կարգին զինք կզգուշացներ Կարաջա իշխանէն, հայտնելով որ ան համախորհուրդ շարաշուք Հալիթ էֆենդիի

Առաջին հրճվողներեն պիտի ըլլային նաև ֆրանսական զործակալները՝ որոնք տապալած կտեսնենին հանձին Մանուկ բեյի ուխտյալ ստիս մը նապոլեոնի շահերուն:

Բուխարեստի ֆրանսական հյուպատոսը, լըզու, 1813 հունիս 9-ին կտեղեկագրեր Մաթինին, թէ իր նախորդ ղեկույցով հաղորդած էր Մանուկ բեյի փախուստին և անոր ինչքերուն վրա զրկած սկիբեստրին մասին: Այժմ կազմեցան, թէ հրահանգ եկած է Բ. Գոնեն Վալահիո իշխանին՝ շվեքցնել արգելքը և կարևորութիւն շտալ ուս հյուպատոսին բողոքներուն և թէ կիսովի նույնիսկ, որ Բ. Գոնը Պոլսու ուս պատվիրակին պահանջած է այդ Մանուկը. զոր դասալիբ կնկատես և որ իրը թէ մեծ գումարներ ունի վերագործնելիք³:

Եվ, այնուամենայնիվ, թուրքերը չուղեցին թողուլ Մանուկ բնի օժիքը, ոչ միայն անոր համար, որ Գանուրի ալիբուն վրա զեռ կարիք ունենի անոր ծառայութիւններուն երկրին տնտեսական կյանքին մեջ, այլ որովհետև իրենց համար ազեալ մը պիտի ըլլար, և թէ ան վիրջնականապես հանձնվեր ուսական շահերուն, պատերազմեն հետո ալ:

Մանուկ բեյի արխիվին մեջ բազմաթիվ նամակներ կան Պոլսեն զրկված իրեն թուրք սյաշտոնատարներու կողմէ՝ որոնք անընդհատ Պոլիս կհրավիրեն զինք, ըսելով, որ Բ. Գրան շրջանակներուն մեջ համակրութիւն և բարացակամութիւն կտիրեն ղեպի իր անձը և պատճառ մը չկա, որ ան շղատնա իր հայրենիքը: Առաջին հրավերը ան կտանաք հազիվ Սիրիու հաստատված, այսինքն 1813 մայիս 22-ին, Քեհյա-զաղե Ահմեդ Ամիշ աղայի կողմէ, որ իր մտերիմն էր եղբի Բայրաքթարի օրերէն, և որ հաջողքեր էր իր դիրքերը պահել նոր իշխանութիւնաց օրով ալ⁴:

Մանուկ բեյ ոչ միայն լուրջի շառավ այդ հրավերները և իր դիրքը որեւէ կերպով չփոխեց, այլ Սիրիուն Քիշնե զրկված նամակներով խորհուրդ տվավ Ահմեդ էֆենդիին ալ՝ շխարվիլ անուշ խոսքերէն Բ. Գրան զործակալներուն, որոնք կու գային թուրքին հրավիրելու զինքն ալ⁵:

Բայց միևնույն ատեն անպատասխանի ալ շրջուց իրեն ուղղված սիրալիբ այդ հրավերները, և 1813 հունիս 23-ին գրեց Ահմեդ Ամիշ աղային այն շարժառիթներուն մասին, որոնք պժգացուցներ էին զինք, և այն անշնչելի մթնոլորտին մասին՝ որ զեռ կշարունակեր տիրել օսմանյան մայրաքաղաքին մեջ⁶:

Հրավերները կանգ չառին սակայն: Մանուկ բեյ փաղաքշական գիրք ստացավ 1813 օգոստոս 11-ին և 14-ին ալ⁷, որոնք ալլես անպատասխան մնացին:

Եվ սակայն միշտ թուրքեր եղան, որոնք հետագային ալ կարիք ունեցան Մանուկ բեյին, ինչպես կարիք ունեցեր էին պատերազմի շրջանին՝ ուսներուն մոտ զանազան միջամտութիւնաց համար:

Այսպէս՝ 1815 հուլիսի 25-ին, երբ արդեն Մանուկ բեյ վաղուց հեռացած էր թուրք հողեն, Սուլեյման Սըրբի, որ վերահսկող անվանված էր Սիլիստրայի

3 Հուրմուզաֆի, Դոկումենտներ, հատոր 16, 42 9:

4 Բուխարեստ քաղաքի պատմութիւն թանգարանի արխիվ, № 26407, 26528, 35063»

35093:

5 Անդ, № 35059:

6 Անդ, № 35166ա և 35167:

7 Անդ, № 35168, 35160:

րով տիպար բաղաբ մը հիմնելու Թինիի մաս, և պաշտոնը, որ ուս պարունի-
րին կողմնն վստահվեցալ իրեն հետևելու թուրք շարժումներուն Գանուրի
չբշտնին մեջ, ինչպես և Բուխարեստի և Յաշի իշխաններուն գործունեութեան՝
ի վնաս ուսմեն ժողովրդին, զրվագներ, որոնք արժանի են նյութ դառնալու
ուրույն հողվածներու և որոնք, այլապես, կերևան մանրամասնորեն. Մա-
նուկ բեյի կյանքին և գործին նվիրված մեր ընդարձակ մենագրութեան մեջ:

№ 14

ՄԱՆՈՒԿ ԵՎ ԻՐ ՀԱՅԵՐԸ

Մանուկ բեյի կյանքին այս զուլսը փակելն առաջ շէնք կրնար բանի մը
առող շնվիրել իր հայ գործակիցներուն, այսինքն անոնց, որ աշակցեր էին
իրեն՝ ուս շահերուն մատուցած իր ծառայութեանց ընթացքին, ըլլա պատե-
րաղմական գործողութիւններու պահուն, ըլլա հաշտութեան համար իր կա-
տարած աշխատանքներուն մեջ:

Արդարև, Մանուկ հավատարիմ մարդոց խումբ մը կհասկսեր միշտ իր
շուրջը Բացի բազմաթիվ այն գործակիցներէն, որոնք անհրաժեշտ էին իր
առևտրական այնքան ընդարձակ գործունեութեանց համար Գանուրի զույգ
ափերուն վրա, աշխատակիցներու ուրիշ խումբ մը իր տրամագրութեան տակ
ունէր ան իր բաղաբական գործունեութեան մեջ:

Այս մարդին վրա անմիջական աշակիցներ էին շուրս Սեբաստյանները—
Պողոս, Մեսրոպ և Գաբրիէլ երեք եղբայրները նախ, և շորորդը Մարտին՝
Մեսրոպի որդին: Լեզուներու տեղյակ և բաղաբական ինտրիգներու մեջ թըրծ-
ված՝ շուրս Սեբաստյանները ծանոթ անուններ էին Գանուրի զույգ եզերքնե-
րուն վրա, և դանազան առիթներով իրենց ծառայութունները ի սպաս էին
դրած ուսմեն երկիրներու իշխաններուն: Անոնցմէ օգտված էր նաև Մանուկ
մասնավորաբար ուսերու հետ իր շփումներու ընթացքին: Բայրաբնարի օրով
Պողոս Սեբաստյանն էր եղեր առավելապես, որ բանագնացի դեր կատարած
էր: Մեսրոպն էր, որ առհասարակ կշարագրեր հայերեն լեզվով իր նամակ-
ները, մինչ Մանուկի իր իսկ գրի առած գրութունները հայտատու թուրքերեն
էին, թուրքերենը եղած ըլլալով իր մայրենի լեզուն: Գաբրիէլ գործնական աշ-
խատանքներ էր, որ կկատարեր: Իսկ Մարտին ասպարեզ եկալ համեմատա-
բար ավելի ուշ, 1808-ն հետո:

Բոլոր Սեբաստյաններն ալ միշտ անձնվեր մնացին իրեն, և եղան ուսու-
րու հետ իր գործակցութեան բոլոր հանգրվաններուն մեջ: Մանուկ բեյ, իր
կարգին միշտ պաշտպան, մնաց անոնց, և երբ կմերժեր իրեն համար որևէ
զրամական հատուցում ուսերուն իր մատուցած ծառայութեանց փոխարեն՝
ուս իշխանութեանց հողածութեանը կհանձնարարեր Սեբաստյանները:

Սեբաստյան երեք եղբայրներն ալ ուսական շահերու շրջանակին մեջ
պիտի մնային հաշտութեան դաշնագրի կնքումեն ևտքն ալ, շարունակելով
վայելիլ ուսական պաշտպանութիւնը:

Այնպես որ, երբ Ռուսիո կանցլեր Նեսելրոդ 1813 հուլիս 13/25-ին Պե-
տերբուրգէն կգրեր Պոլիս՝ ուս դեսպան Իտալիսկիի, թն ցարը Մանուկ բե-
յին ուսական բաղաբացիութիւն շնորհած է և կհանձնարարեր հետևաբար

անոր՝ անհրաժեշտ պաշտպանությունը ընծայել Մանուկ բեյին Վալահիո և Մուղղուլայի մեջ իր ունեցած գործերը կարգի դնելու առթիվ, որպեսզի ան կարևոր օգտավի ժամակետն ու դյուրություններին, զորս Բուխարեստի գաշնազիրը կապահովեր երկու կայսրությանց դաղթականներուն, կազմելոցնէր միևնույն ատեն, թէ ռուս քաղաքացիություն շնորհված է նաև Պողոս, Մեսրոպ և Գաբրիել Սեբաստյաններուն, և թէ անհրաժեշտ է անոնց ևս ընծայել միևնույն պաշտպանությունը¹⁵:

Բայց ոչ որ այնքան անձնվիրությունը ծառայեց Մանուկ բեյին, որքան Պապիկ Արթինյան և Ասատուր Ավետյան, որոնք իր հավատարիմ գործակիցներն եղան ոչ միայն իր սեփական գործերուն մեջ, այլ ռուս շահերուն իր բերած օժանդակութեան ատեն ար:

Հետադային, իր Ռուսիա հաստատուելէն հետո, Երբ կմիջամտեր ռուս արքունիքին մոտ որպեսզի տիտղոսներ շնորհվին նաև իր զուգ արակիցներուն, իր դիմումին մեջ կակնարկէր նաև անոնց մատուցած ծառայություններուն այդ առթիվ:

Ասատուրի համար կրսեր, օրինակ, թէ սուլթան Մուստաֆայի օրով օգնական նշանակված էր իր մոտ, և Բայրաքթար Մուստաֆա փաշայի հրամանին տակ կառավարիչն էր եղեր Շիշթովի շրջանին, իսկ իշխան Պրոզորովսկիի ատեն իր հետ միասին անցած էր ռուսերուն: Զորավար Կամենցկիի օրով հաստատված էր Զիմնիշա, Շիշթովի դիմաց, և իրեն, Մանուկի, կղրկեր շահեկան լուրեր, զորս կոմս Կամենցկիի կփոխանցեր ինքն ալ իր կարգին: Նիկոպոլի և Կուլեի բանակցությունները իր միջոցով եղած էին և երկիցս հանդիպություն ունեցած էր Կուլե անցնելու թուրքերուն մոտ: Կուստուզովի օրով ալ Զիմնիշա մնացեր էր և ճշգրիտ լուրեր կղրկեր Զուրջովա ուղղակի Կուստուզովի՝ իրեն: Ան Զիմնիշա մնացեր էր մինչև հաշտության կնքումը:

Ավելցնեք, որ Ասատուր իր աներծագն էր և 1813-էն 1916 Բուխարեստ զեռ երիք տարի մնաց Մանուկ բեյի գործերուն զուխը, հետո վերջնապես Բեսարաբիա անցնելու համար:

Գալով Պապիկին՝ Մանուկ բեյ սնոր համար կգրեր, թէ Բայրաքթար Մուստաֆա փաշայի օրով զինվորական պաշտոնի վրա էր ան հազարապետի աստիճանով, և Թրնավայի շրջանին մեջ Գաբրովան և Դերինդենը կկառավարեր, իսկ Պրոզորովսկիի ատեն ինքն ալ միասին էր անցեր ռուսերուն: Մեծապես օգտակար եղած էր զոր. Բագրատիոնի իբրև քաջատեղյակ Բալխանյան շրջանի դիրքերուն և անոր հրահանգով ծառայած զոր. Զասի հրամանին տակ, ավելի հետո մաս առնելու համար կոմս Կամենցկիի վարած գործողություններուն¹⁶:

Սույն Պապիկն էր, որ Բայրաքթարի օրով Մանուկ բեյին ընկերացած էր Պոլիս, ուրկն ինք ևս խոյս էր տվեր 1808 նոյեմբերի եղերական զեպերեն հետո, ուշագրավ զեր կատարելու համար Դանուբյան բերդաքաղաքներու գրավման ատեն մասնավորապես:

Մանուկ բեյի արակցող հայերուն թիվը չի փակվի որ այս քանի մը զեմքով: Ան ամենուրեք գործակիցներ կհարեր իրեն, բոլորին ալ վրա տարածելով իր հեղինակությունը, բայց և իր բացառիկ հոգածությունը:

15 ՄՌԱՔԱ, գործ 2290, թղթ. 28:

16 Բուխարեստ քաղաքի պատմության թանգարանի արխիվ, № 35207:

Վ Ա Վ Ե Ր Ա Թ ՈՒ Ղ Թ Ե Ր

Վաճառաթուղթերը, զորս ունինք ի ձեռին, լրիվ կպարզեն Մանուկ բեյի կատարած վճռակալն ղերը պատերազմի այս նոր շրջանին՝ փութացնելու համար ռուս և թուրք հաշտութիւնը, և այս կերպով աջակցելու համար Նասպոյեռնի ձախողանքին:

Այդ վաճառաթուղթերը իրենց սովոր մասով պիտի կցվին այն մենա-
գրութեան՝ զոր պիտի նվիրենք Մանուկ բեյի կյանքին ու գործունեության և
վրդ այս պահուս հայերենի վերածելու վրա ենք՝ ռումաներեն շարադրած
ըլալով պաշն նախապես:

Ավելորդ չսնպեցինք սակայն անոնցմէ մեկ քանին կցել մեր հողվածին
եւլին երկրորդ մասին, ինչպես ըրինք առաջին մասը փակելու ատեն ա:
Փաստաթուղթերը, զորս կներկայացնենք, առնչություն ունին առավելապես
այն աշխատանքներուն հետ, որոնց լծփնցավ Մանուկ բեյ ռուս և թուրք պա-
տերազմի վերջին փուլերուն ընթացքին, այսինքն Բայրաքթարի եղերական
վախճանեն և իր գործունեությունը վերջնականապես ռուս շահերուն կա-
պելէ հետո:

№ 1

ՄԱՐՏԻՆ ՍԵՐԱՍՅԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊՐՈՁՈՐՈՎՍԿԻԻ ՀԵՏ

1808 ղեկնմբեր 2 (Նոյեմբեր 20)
Բոխարեստ

(Հատված տեսակցութեն մը, զոր Բոխարեստի մեջ ունեցավ 1808 Նոյեմբեր 20-ին Ռուս-
ջուկի Անմեղ Էֆենդիին կողմն ղրկված Մարտին Սերաստյան՝ որ նամակներ և նվերներ կրերը
մարաշխտ իշխան Պրոզորովսկիին):

*Պ. Սերաստիանին (ուղղե՛ Սերաստյան) ըսավ մարաշխտին, թէ Ահմեղ
Էֆենդի ղրկեք ղրկած է հատկապես նորին բարձրութեան ուղղված բարեկամա-
կան նամակով մը, նորոգելու և ամրացնելու համար բարեկամութեան և իրա-
րահասկացողութեան կապերը, ընդմեջ իրեն, Մուստաֆա փաշայի հաջորդին
և մարաշխտին, հավատարմով, որ ինք ևս իրավունք ունի անոնց և փափա-
քելով արժանանալ անոր վստահութեան և հարգանքին:*

*Մարաշխտը պատասխանեց, թէ Ահմեղ Էֆենդիին իր համբավեն կճանչնա.
և քանի որ ան կուզար հաջորդելու իր հանգուցյալ բարեկամ՝ Մուստաֆա փա-
շային, իրեն համար հաճույք կսեպի իր բարեկամությունը հավաստել անոր
իբրև իր հարեանը:*

*Մարտին խնդրեց մարաշխտեն Ահմեղ Էֆենդիի անունով՝ ընդունիլ այն
քանի մը ընծաները, զորս ան կղրկեր նորին բարձրութեան ի նշան բարեկա-
մութեան, ըստ ներկայացված ցուցակին:*

Մարաշխտը պատասխանեց, թէ զսնոնք կընդունի իբրև երաշխիք բարեկամութեան և նկատելով, որ շատ քիչ ատենական համար կկամ է հոս և սչինչ չէ բերած հետք, իբն համար հաճույք պիտի սեպէ Յաշեն ուղարկել անոր իր փոխադարձ լարեկամութեան ապացուցութիւր:

Մարաշխտը հարցուց հետո, թէ Պոլսո նեղափոխութունը վերջ գտա՞ծ է արդե՞ն:

Մարտին պատասխանեց, որ հաղիվ երևր օր տևած է ան, և թէ ըմբոստ լենիշերինէր, տեսնելով սուլթան Մուստաֆայի դիակը՝ բաշված են, հնազանդելով սուլթան Մահմուդի հրամաններուն: Ու բսով, թէ Մուստաֆա փաշան ինքն էր, և ինքզինքը օդը հանեց՝ ձեռքը շինալու: համար ապստամբներուն, որոնք իր կշանքին կապառնալին:

Մարաշխտը հավաստեց, որ խիստ զգացվում է իր հանգուցալ բարեկամին Մուստաֆա փաշայի այս կելբական մահվան համար և որ իր կարծիքով լազ չէր, որ մեկ հարվածով ան փորձեր փոխել օսմանցիներու գինվորական բովանդակ հին սիտեմը:

Մարաշխտը հարցուց, թէ ի՞նչ էր շարժառիթը սույն աղետին:

Մարտին պատասխանեց, թէ լենիշերիները զժգո՞ծ մնալու պատճառներուն հարվով և միևնույն ատեն զազտնի հասկացողութեան կկամ ըլլալով հանգուցալ սուլթան Մուստաֆայի հետ իր եղբայրը (Մահմուդ Բ.) ստիպված էր զայն ղոհել, վերջ տալու համար սույն ըմբոստութեան, որ կապառնար իր գահուն և ստիպելու համար ապստամբները որպեսզի իրենց պարտականութեան զուխը անցնին:

Մարաշխտը հարցուց, թէ որո՞նք հաղթեցին ի վերջո, լենիշերինէրը թէ սելժնեները¹⁷: Մարտին պատասխանեց, թէ սելժնեները իրենց պարտութենէն հետո բաշվեցան ասիական կողմը, Սկյուտար:

Մարաշխտը հարցուց, թէ ներկայիս մեծ վեղիքը ո՞վ է մայրաքաղաքին մեջ:

Մարտին պատասխանեց, թէ սուլթան Մուստաֆա այդ բարձր պաշտոնին կոչած էր Առնափուտ Մեմիշ էֆենդին, այն նույն անձը, որ սուլթան Սելիմի օրով իր ղորբերով պաշտպանած էր Վալահիան Վիդիի Պազվանգօղուին ասպատակութեանց դեմ: Մարտին ավելցուց, թէ Բնթիբ աղան՝ որ Ահմեդ էֆենդիի բացակայութեան Ռուսչուկի հրամանատարութեանը վարած էր, սպանված չէ, ինչպէս պահ մը լուր տարածվեցավ հոս, այլ ընդհակառակն, վերջերս իր բարեկամական կայերը նորոգեց Ահմեդ էֆենդիի հետ, երգում տալով, որ պիտի ծառայէ հասարակաց գատին:

Մարաշխտը ըսավ, թէ շատ բաներ այրած են մայրաքաղաքին մեջ և շատ մեղկիթներ կրակի տրված, և հարցուց, թէ Այա-Սոֆիան՝ ևս այրած է և շատ մարդ զոհվա՞ծ է կոիվներու ընթացքին:

Մարտին պատասխանեց, թէ թրքական բազմաթիվ տուններ հրո ճարակ եղած են, թէ մեղկիթները փրկված են, թէ Այա-Սոֆիայի վրա բռնկած կրակը մարված է, թէ երկուստեք մարդկային կորուստներուն թիվը մոտ 15 հազար կհաշվվի:

17 Սելժնե, կարգապահ բանակը զոր փորձեց ստեղծել Քալբաթար:

Մարաջախտը ըսավ, թե կապուտան-փաշան ազատած է նավու մը վրա ապաստանելով:

Մարտին հաստատեց, թե ան նալով գացած է Կաղիր փաշայի հետ մեկ-տեղ մինչև Վիդա, Մեղիայի մոտիկ, Աև ծովու ծովաբերինն ետին, մայրաքաղաքեն ոչ շատ հեռու, և թև այնտեղ կգտնվին Բեքիր աղայի հրամանատարությամբ 15 հազար զինվորներ:

Մարաջախտը ըսավ, թե ուրեմն կրնա ան Ռուսչուկ անցնիլ, Ահմեդ էֆենդիի մոտ, և ի հարկին կարող է գալ ապավինել Վալահիա, ուր ինք, մարաջախտը, անոր ապաստան պիտի ընծայն, ապահովված իր թշնամիներուն կողմն որևէ վտանգի դեմ:

Մարաջախտը անոր հարցուց նաև, թե ո՞վ է Ռեիս էֆենդին ներկայիս: Մարտին պատասխանեց, թե վերջերս սուլթան Մահմուդի կողմն այդ պաշտոնին կոչվեցավ Գալիբ էֆենդին:

Մարաջախտը դիտել տվավ, թե աս այն Գալիբ էֆենդին է, որ ասկն առաջ պաշտոնի վրա էր և բանակցեցավ Սլորոզիայի զինադադարի դաշնագրին առթիվ:

Մարաջախտը տեղեկություն ուզեց Մանուկ բեյի և սպատար Բիրիբայի մասին:

Մարտին պատասխանեց, որ Ահմեդ էֆենդի լուծ ըլլալով Մանուկ բեյի ժամանման մասին վիզա՝ Ռուսչուկին հեռուն ձիավորներ զրկեց որպեսզի ընկերակցին անոր և որ ան հասած պետք է ըլլա արդեն. գալով Բիրիբայի, որ Ռուսչուկին Պոլիս էր մեկներ Մանուկ բեյի ետենն, այնտեղ մնաց իր ընտանիքին մոտ:

Նորին բարձրությունը անոր դիտել տվավ, որ <սուլթան Մահմուդ> վերջին շտապիղն է օսմանյանց տոհմին և այլևս հաջորդ չունի:

Մարտին պատասխանեց, թե անոր սուլթանուհիներեն ոչ մեկը հզի է մինչև այսօր:

Մարաջախտը հարցուց, թե պիտի ընդունվի՞ Իսմայիլի Փեհլիվան աղային մատուցած հրաժարականը:

Մարտին պատասխանեց, թե Ահմեդ էֆենդի մերժած է անոր հրաժարականը և հրավիրած է զայն, որպեսզի իր բարվոք և հավատարիմ ծառայությունները շարունակն նաև իր իշխանության տակ:

Մարաջախտը ըսավ, թե Բրայլայի նազիրը, հանգուցյալ Մուստաֆա փաշայի թշնամին՝ զո՞հ եղած պիտի ըլլա անոր մահվան լուրը առնելուն:

Մարտին ըսավ, թե հիշյալը ինք ևս պիտի հաշտվի Ահմեդ էֆենդիին հետ, որ ավելի մեղմ է, քան իր հանգուցյալ նախորդը:

Մարաջախտը հրահանգներ տվավ, որպեսզի պ. Մարտին հոգածության արժանանա, մինչև որ Ահմեդ էֆենդիի ուղղված իր պատասխանը պատրաստ ըլլա և հանձնվի իրեն՝ անգամ մը ևս իր ներկայության ընդունվելով, որպեսզի հավաստվի անոր իր բարեկամությունն ու հարգանքը զնպի Ռուսչուկի իր այս լավ հարևանը:

1809 հունվար 10 (1808 ղեկանմբեր 29)
Բուխարեստ

Դրագոման Մանուկ խիստ զաղտնի կերպով հաղորդեց ինձ, թե Ռուսչուկեն իր մեկնումին ժամանակ, մտերմաբար խորհուրդ տված է նախկին կապուտան-փաշա Ռամիդ փաշային, որ վերջերս ապաստանած էր այնտեղ, որ եթե ուզե անցնել Վալահիա՝ ռուսերուն մոտ, պիտի գտնե ներկա պարագաներուն խիստ նպաստավոր ընդունելություն մը և քավարար երաշխիք առ միշտ, մանավանդ, որ ծագումով իրիմցի է ինք, բայց ան պատասխանած է, թե իր նախատեսությունները և հույսերը հակահեղափոխության մը համար, պատճառներ են թուրքիս պահելու զինքը:

Մանուկ ինձի ըսավ, թե Ահմեդ էֆենդի թորթախավոր ըլլալով և ծանրաշնչություն ունենալով, որոնց ենթարկվեցավ ուժգնապես սուլն դժբախտ հեղափոխության երեսն, կվախնա, որ անսպասելիորեն մեռնի ան, ինչ-որ անկարգությունները իրենց գազաթնակետին պիտի հասցնե Ռուսչուկի մեջ. ահա թե ինչու ինք <Մանուկ> փութացուց իր մեկնումը Ռուսչուկեն և պիտի ջանա իր ընտանիքը ևս Բուխարեստ փոխադրել հոնկե որքան կարելի է շուտ:

Անոր հաղորդած են Ռուսչուկեն, թե Ահմեդ էֆենդի մուշտակ հագցուց (պաշտոն տվավ) զանազան սպաներու, թե այնտեղ կապասվի շուտով Իսմայիլի Փեհլիվան աղան, թե լուր կա նաև, որ Դանուրի եզերքներուն մոտ կհասնին շուտով Բ. Դրան քանազնացները, բայց Վիգբի և Աղրիանուպոլսո շրջականերուն մեջ կտիրեն այս պահուս խռովություններ և ըմբոստություններ, որոնք մոտալուտ ներքին պատերազմ մը կզգացնեն և կապառնան Բուլղարիո և Ռումելիի մեջ շփոթություններ պայթեցնելու. այլապես վախնալիք ոչինչ կա Վիգիների և Ռուսչուկի կողմը. իսկ Ահմեդ էֆենդին պաշտոնական ուլինչ շրտաացավ դեռ Բ. Դրենն:

ՄԱՍԲԱ, գործ 1928, թղ. 36, ֆրանսերեն պատճեն:

1809 հունվար 17/29
Բուխարեստ

Դրագոման Մանուկ ինձ մեկ նամակը ցույց տվավ Ռուսչուկի իր գործակալին՝ Պապիկի, որ Ահմեդ էֆենդիի հավատարիմն է և ստանձնած է իր (Մանուկի) շահերը ևս իր բացակայության և որ խորհրդապահաբար իրեն կհաղորդե հետևյալը:

Իսմայիլի Փեհլիվան Աղան, ուզած ըլլալով մոտենալ Ռուսչուկի, որպեսզի Կուրբան-Բայրամի տունը տոնե Ահմեդ էֆենդիի իշխանության տակ

գտնվող գյուղի մը մեջ, իբր լիազոր Իսմայիլ իւշոյած էր իր տեղակալ Աբու Աղան իր հաղարի շափ հավատարիմ զինվորներով, իր հետ բերելով զկայի Բարադառ շուրջ 700 զինվորներ, և հրը կանդ առած էր Կուսկունջուկ գյուղը, Աբա Աղային լուր ստացած և, թև նախորդ մեծ էնջիբը Չիլիբի փաշան¹⁸, զոր Մուստաֆա փաշա Պուսան բշած էր զկայի Իսմայիլ, որպեսզի հոն իր ծախքով բանակ մը պահել սուլն բերդաբաղարին պաշտպանութանը համար, զլուխն անցած տեղվույն բնակիչներուն և մնացյալ պահակազորին, հայտարարած է, թև այլևս չեն ուզեր Փեհլիվան աղան, ոչ ալ իր տեղակալը, որուն առջև պիտի փակվին զուտները և որ կրնա բաշվիլ երթալ իր մարդոց հետ:

Փեհլիվան Աղա սուլն հեղակարծ զկայքը հաղորդած ըլլալով Ահմեդ էֆենդիին, այս վերջինը անոր զրկած է իսկույն իր վստահելին՝ Հաճի Ամիլ Աղան բերանացի հայտնելու համար անոր, թև պետք է առայժմ որևէ ձեռնարկ չընել Իսմայիլի և իր հափշտակիչին դմ, թև պետք է ձեռք բաշել և իր ճակատադրին թողուլ վայրը իր բնակիչներով, զորս մուրթեցուցած է փաշան, որ, իբրև ներիւրի, հակառակորդն է իբրև, և հաղորդելու անոնց, թև ոչ մեկ նպատակ ունի կոնվ մղել իրենց զեմ և բոնի վերջնէլ բաղաբը, բայց պետք է ի վիճակի ըլլան զայն շղիշիլ ոուսերուն և անոնց կողմէ հարձակած պարագային զայն պաշտպանել ինչպես պաշտպանեց Փեհլիվան Աղան մինչև այսօր: Փեհլիվան փաշայի բաշվելն հետո՝ աչետեղ միայն 2000 զեշ զինվորներ կմնան, որոնց ծոցին մեջ վեճերն ու խռովութիւնները պիտի սկսին: Ահմեդ էֆենդին կխորհի իր հավատարիմ ու սիրելին՝ Փեհլիվան աղան գործածել իր բնախը և փորձված զինվորներուն հետ՝ ընդզեմ Ըլբըզուի¹⁹ դավադիրներուն և մնացյալ ապստամբներուն:

Մանուկ ինձ հավաստեց, թև Մեսրոպ Սերաստյան տեղեկութիւն շունկը ցարդ այս լուրեն, որ գաղտնի կպահճի Ռուջուկի մեջ: Ձեր վստմութիւնը պիտի զատե անոր կարեւորութիւնը, նկատի ունենալով, որ Մանուկ թեյ կհավաստե, թև Փեհլիվանի բաշութիւնն ու համատութիւնն էր, որ թուրքերուն ձեռքը պահեցին ցարդ այս կարեւոր և ահավոր բերդաբաղաբը:

Մանուկ մտերմական իր խոսակցութեանց ընթացքին ինձ ըսավ, թև եթև Ահմեդ էֆենդին շի պաշտպաներ Իսմայիլը Ռումելիի իր զինվորներով, զորս Բ. Դուռը ոչ թև Փեհլիվան Աղային, այլ ուրիշին հրամանին տակ պիտի զեւ և որոնք ոչ մեկ արժեք պիտի ունենան այլևս, անոր համար է, որ այսպիսով պատերազմը պիտի վերսկսի, Իսմայիլի գրավումը անհունապես ավելի պիտի գյուրանա և նույնիսկ անոր անձնատվութիւնը անհնար պիտի ըլլայ: Ան ինձի ըսավ, թև Ահմեդ էֆենդին ներկայիս հանգիստ է և ապահով ոուսերուն կողմն, աչպես որ անպաշտպան կթողու Ջուրջովան և Իսմայիլը, և իր զորքերը կգործածեն ապստամբներուն զեմ և իր սեփական երաշխագործութեան համար իր իշխանութեան տակ գտնված վայրերուն մեջ, որոնք կգտնվին ըմբոստներուն և իր հակառակորդներու սպառնալիքին կամ գրոհին ներքև, թև թշնամութեանց վերսկսման պարագային ինք հանձն կառնե համոզել Ահմեդ էֆենդին, որպեսզի համաձայնի Մարաշախտին (Պրոզորովսկի) հետ թև՝ մեկ և թև՝ մյուս բերդաբաղաբին համար, բայց պետք է առայժմ փաղաքել զայն ու խնայել անոր (Ահմեդ էֆենդիին): Ան (Մանուկ թեյ) զիս երզվնցուց այս մա-

¹⁸ Չեիբի Մուստաֆա, մեծ վեզիր, 1807 մայիս 4—1808 հուլիս 29:

¹⁹ Ըլբը-օզու, Սյուլեյման, որուն պաշտոն տված էր Բ. Դուռը Ահմեդ էֆենդիին շաշիվը տեսնելու:

սին չխօսել որևէ մեկուն ՚Նեո, նկատի ունենալով, որ իր բնածանիքը զեռ կզտնովի թուրքերուն ձեռքը և կվախենա, որ անոնց կազմե վտանգի և շնաջնջումի նշավակ կդառնա. (բաժվ) թե կսպասե Նաշտութեան՝ լիազորներուն վալահիա սնցնելուն՝ որպէսզի իր բնածանիքը ազատե անոր սպառնացող վտանգներէն մասնավորաբար, ներկա զմեզակի պարագայներուն մեջ: Ան ինքն ըսավ, թե ուրիշ ոչ մեկուն պիտի չարտահայտվեր այս կերպով՝ որովհետեւ (Նամուզմա՛ է թե) ևս երբևր չպիտի օգտագործեմ իր բաժնեբեր, շարաշար չպիտի գործածեմ իր վտահոյութիւնը և չպիտի ուղեմ զայն զօհնէ որևէ անդադունապահութեամբ. (ան ըսավ) թե այս կերպով ան կսպասե տեսնելուն, որ ինչ ցարձվածք պիտի ստանան բանակցութիւնները, որոնք պիտի սկսին՝ իր ծառայութիւնները ի սպա զնելու Նամար մարաջախտին, շուղելով և չկրնալով որևէ բան խոստանալ կանխավ, բայց Նուսալով, որ պիտի կարենա մեծապէս օգտակար ըլլալ մէզի: Ան ինչ զպացուց, թե մեծ Նակառակորդ մը ունի՞ր Նանձին Ալատրիո, որ մուրհացուցած է և կշարունակե մուրհացնել թուրքերը և կզորե զանոնք ընդդէմանալ սույն իշխանութեանց մեզի կցվելուն: Այս առթիվ պետք է զիտել տամ, թե ավստրիական զործակալ պ. զը Բրենների ճամբորդութիւնը զկպի Յաշ, պ. Դուրգների օժանդակելու զիմակին տակ, — ի բացակայութիւն պ. Լամմերի, որ զժողոված Քլլալով (Մուղովայի) զիմակին և ուսսերուն Նեո՝ յի կրնար այս պահուս Յաշ վերադառնալ, առանց անպատեհութեան կրնա Մուղովայի ավստրիական Նուսառտաբանի վիճելի Նարցերուն աշխատանքին մէջ ունենալ բոլորովին զիվանագիտակէն նպատակ մը. ձգտելով այնտեղ լրտեսել և Նեոտադոտել ավելի մտտն լիազորներու զիմումները, մանավանդ ինչ որ կրնա վերաբերիլ իշխանապետութեանց և մասնավորաբար Վալահիո Նոզվածին:

Մանուկ բեշ ինչ ըսավ, թե այն ատեն պիտի կարենա ինչ բողազերծել ամեն բան առանց վերապահութեան, որովհետեւ, ըսավ ինձ, ի՛նչ օգուտ զՆահրիվէլէն առանց օգտակար ըլլալու զործին, եթէ իշխանապետութիւնները պիտի վերադարձվեն Բ. Դրան. այն ատեն թուրքերը պիտի նշմարեն, որ քողազերծ ըրած է իրենց շահերը և զողտնիքները Դանուրի Նանդիպակաց եղբրքին վրա և կորստեան պիտի մտտնովի ու պիտի ստիպվի նույնիսկ Նեոսնալ այս երկրներուն և Վալահիային՝ սպաստան փնջրելու այլուր, զե՛ծ մնալու Նամար թուրքերու և Նույներու Նալածանքներէն, որոնք մեծապէս պիտի թշնամանան իրենու Այս բանին Նամար պետք է, ըսավ ան, Նեոտաձգեմ և Տրամարիմ բացարձակապէս նույնիսկ մտերմական բնութիւն ամեն զիմումն իմ պետերուս մոտ. ստիպվեցա խոր գաղտնապահութիւն խոստանալ իրեն իր Նաշտութեանց Նամար և իրեն ըսի թե որևէ մեկին ավելի զիտեմ, թե որքան կրնա ազգել Աճմեղ կֆենդիի և նույն իսկ Բ. Դրան նախարարներու կարծիքին վրա, մանավանդ երբ սուլթանը ևս իրեն Նանդեպ կպահճե ետախտագիտական զգացում մը, զոր արտահայտեց նաև Նանզուցյալ Մուստաֆա փաշայի Նայ սեղանավորներուն. (ան ըսավ), թե այսպիսով ըլլա իր սեփական, ըլլա մեր շահերուն պահպանման Նամար, պետք է խնամքով ծածկել երեսութիւնը և որքան կարելի է երկար ինքզինքը նվիրված ցուց տալ թուրքերուն շահերուն, և ցուց տալ, որ մարաջախտին մոտ իր ունեցած վարկին շնորհիվ կմիջամտե ի նպատ Թրքական շահերուն Դանուրի սույն եղբրքներուն վրա:

Պարտքս սեպեցի բոլոր այս մտերմական մանրամասնութիւնները Նադորդե մարաջախտին միտիայն առ ի զիտութիւն իրեն, խնդրելով իրմէն, որ

դիս պզտիկ շնորո հանդեպ Մանուկ բնյի, ոչ ալ ուրիշին, տեղի շտալու համար որեւէ տարակուսանքի և կարենալ շարունակելու համար, առանց որեւէ կասկածի, իրմն քաղել այս կարգի տեղեկություններ, որմն մարաշախտը պիտի կարենա լավագույն օգուտները քաղել ի նպաստ մեր օգոստոսափառ վեհապետին շահերուն: Մանուկ ինձ կրկնեց իր իսկ սեփական բառերով. «Առանց համարձակելու շատ առաջ երթալ և առանց ոչինչ խոստանալու կհուսամ, որ իմ տվյալներս և իմ միջոցներս մարաշախտին օգտակար պիտի ըլլան այնքան ազդեցիկ կերպով, որքան չպիտի կարենային ըլլալ 20 հազար ռուս դինվորներն բաղկացած բանակ մը այս շրջաններուն մեջ»:

Կհամարձակիմ հանձնարարել այս առթիվ պ. Մեսրոպը և իր զավակը՝ Մարտին Սեբաստյանը, զորս անհրաժեշտ է պահել Դանուբին անդին և զանոնք մշակել ի բացակայություն Մանուկ բնյի, որպեսզի շարունակեն իրենց ծառայությունները բաղձացված հաջողությամբ:

ՄԻՒՔԱ, գործ 1928, թղ. 82—84, Ֆրանսերեն պատճեն:

№ 4

ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ԵՎ ԶՈՐԱՎԱՐ ՄԻՆՈՐԱՂՈՎԻԶԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1809 մարտ 4

Բուխարեստ

(Հաղորդագրություն այն գաղտնի տեսակցության մասին, կոր Ն. Վ. տեղակալ-գորավար Միլորադովիչ և դրագոման Մանուկ բեյ ունեցան, կոլեգիայի խորհրդակաՆ Բիրիբոյի միջոցով, գորավարին ապարանքին մեջ):

Մանուկ բեյ զորավարին հայտնեց իր երախտագիտությունը այն բարության համար, զոր իշխան մարաշախտը (Պրոզորովսկի) ունեցած էր հրահանգ տալով որպեսզի բնդունվի իր ընտանիքը:

Զորավարը Մանուկ բեյը ապահովեց մարաշախտին նպաստավոր տրամադրությանց և իր վիճակին նկատմամբ անոր ունեցած ջերմ շահագրգռության մասին: Հետո ըսավ անոր, թե մարաշախտը իրեն վստահած ըլլալով իր՝ Մանուկ բեյի խոստումը, թե բանակցությանց խզման պարագային պիտի դուրացնեն Ահմեդ էֆենդիի մոտ Իսմայիլ և Զուրջովա բերդազարներուն անձնատվությունը, կուզն իր հետ միասին մշակել ծրարիքը գաղտնի այն պատրաստություններուն որոնք կիրարկության պիտի դրվին այդ նպատակին հասնելու համար:

Մանուկ բեյ ըսավ, թե շանքեր թափելու վրա է համոզելու համար Ահմեդ էֆենդին, որ ինք ևս զա ապաստան փնտռել Վալահիո մեջ և զայն բերելու համար ռուսերուն կողմը: Այն ատեն կուլեգիայի խորհրդակաՆ Քիրիբո հաղորդեց զորավար Միլորադովիչին պարունակությունը մարաշախտին զրկած իր զույգ տեղեկագիրներուն այն թաքուն ձեռնարկներուն մասին, զորս Մանուկ բեյ կատարած է Ահմեդ էֆենդիի և Ռամիզ փաշայի մոտ, տեղեկագիրներ, որոնք նորին վսեմության փետրվար 28 թվակիր հրահանգներեն ավելի առաջ հղված են:

Ջորավարը հարցուց Մանուկ բեյի, թե որևէ պատասխան չունի՞ իր վըստահելի մարդերն՝ Պապիկինն և թե կկարծեն, որ Ահմեդ էֆենդին մեզ կհանձնեն բերդաքաղաքը առանց կռվի՞ եթե թշնամությունները վերականգնվեն:

Մանուկ բեյ պատասխանեց, թե տրված ըլլալով իր ներկա կացությունը և նպատատվոր նկարագրեր Ռուսշուկի բնակիչներուն, որոնք կկասկածին արդեն Ահմեդ էֆենդիի վրա իրբև նվիրված ռուսերուն, հնարավոր չի գտներ այս անձնատվությունը՝ առանց ռուս բանակի մը երևման Դանուբին անդին և նույն իսկ այն կարծիքին է, թե անմիջապես որ ռուսերը ուզեն անցնիլ Դանուբի շրջա կետերեն, Պիետրայեն, Ռուհուվայի և նիկոպոլիսի միջև, Սիլիստրայի մոտ, և Գալացեն 15 հազար մարդով, Իսմայիլի, Ջուրջուվայի և Բրայլայի բերդաքաղաքները պիտի իյնան ինքնին, որովհետև Ռուսիայի զանազան շրջաններու և Դանուբին սույն եզրերենրու բնակիչները, որոնք պիտի երթային զորացնել այդ բերդաքաղաքներու պահակազորքերը՝ չպիտի կարենան իրենց վայրերը թողուլ այնտեղ մեկնելու համար. ասկե դատ, Ահմեդ էֆենդին կախված է պարեն և զորք չլրկիլ Իսմայիլ և Բրայլա, և եթե ռուս բանակ մը զա տասը օր պաշարել Ռուսշուկը, ան արդարացի պատրվակ պիտի ունենա հրավիրելու բնակիչները, որ կարենալ պահպանելու համար իրենց ընտանիքներն ու ստացվածքները, պետք է անձնատուր ըլլան ռուսերուն, և արգելելու զանոնք իրենց դուռները թողուլ զբաղվելու համար Ջուրջուվայով, և այսպեսով իրականացնել Ռուսշուկի անձնատվությունը և անմիջապես հետո էլ Ջուրջուվային. ասկե զատ այս միակ միջոցով է, որ ան պիտի հաջողի թույլ շտալ, որ վեց հազար հրացանները, զորս կներկայացնեն Ռուսշուկի բնակիչները, իրենց սեփական պաշտպանությամբ զբաղած, կարենան Ջուրջուվանցնիլ: Առանց ատոր, ըսալ ան, հակառակ Ահմեդ էֆենդիի բովանդակ բարի կամեցողության, որևէ միջոց չկա արգիլելու, որպեսզի զինվորներն ու ռազմամթերքը Ջուրջուվա շանցնին ի պաշտպանություն Ռուսշուկի:

Ջորավարը դիտել տվավ, թե ուրեմն Իսմայիլի և Ջուրջուվայի ռուսերուն հանձնվելու մասին իր տված խոստումին համաձայն չէ, որ կարելի է հույս դնել Ահմեդ էֆենդիի վրա:

Մանուկ բեյ ըսալ, թե իր տվյալներուն վրա հիմնվելով կենթադրեմ, որ այսպէսով ըլլալու համար Ջուրջուվայի, Իսմայիլի, Բրայլայի և նույնիսկ Վիդինի անձնատվության՝ պետք է ռուս բանակ մը անվրեպ և առանց ժամանակ կորցնելու անցնի Դանուբին անդին և իսկույն քալի զեպի Բալկաններու ոտքերը՝ ստիպելու համար այս շրջաններու թուրքերը, ամենուրեք անոնց պարտադրելու համար օրները և զողացնելու համար նույնիսկ Պոլսիները: Փերկարար այս միակ միջոցով է, որ կարելի պիտի ըլլա զբաղել օժանդակ զինվոր և ռազմամթերք ստանալու հնարավորութենեն զրկված այս բերդաքաղաքները, առանց արյուն թափելու: Առանց ատոր, թուրքերը, որոնք պատակաբար են այս պահուս ներքին տարակարծություններով, պիտի միանան բոլորը, տարված ֆանատիզմե, միահամուռ կանգնելու համար ընդդեմ իրենց կրտսեր թշնամիին: Այլապես ինք խոստում չտվալ այնպես կարգադրել, որ Ահմեդ էֆենդին Ջուրջուվան կարենա հանձնել, առանց որ Ռուսշուկի հողամասը Դանուբի մյուս կողմեն ռուս բանակե մի պաշարված ըլլա:

Ջորավարը պատասխանեց, թե այս հատակագիծը ծանոթ էր և լավ, բայց պետք էր տեսնել, թե միջոց չկա՞ նախապես զբաղիլ բերդաքաղաքները: Այս բանին համար Մանուկ բեյ պետք էր ըմբռնել տար Ահմեդ էֆենդիին, թե սույն

պատերազմը պիտի մղվի մինչև ծայրագույն կետ՝ ոչ թե հանգուցյալ զորավար Միքելանժի օրով Եղածին նման, թե մարաջախտը բոլոր միջոցները ձեռք առած է իր բանակին հայթայթելու համար այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է, թե Բրյադի մեջ առ ունի պաշարման ահեղ հրետանի մը և նկատի ունենալով, որ մարաջախտը գործունյա և նախաձեննող է, Ահմեդ էֆենդիի զատապարտված է պարտութիւն մատնվելու: Զուրջովայի գրավումն իսկ առաջ, տրված ըլլալով, որ ինք ևս շրջապատված է ամեն կողմն թշնամիներով և հակառակորդներով և թե, հետևաբար, իր սեփական փրկութիւնը պետք է փնտրել այստեղ և նախապէս հասկացողութեան զառուսերուն հետ և հանձնել իր բերդաբաղաբը:

Մանուկ բն ըստով, թե Ահմեդ էֆենդի, իրեն թուրք, պիտի շկարենա այդ բանը ընել՝ և թե նույն իսկ ուզել, քանի որ Ռուստուկը Զուրջովային զատող խիստ փոքր հետազոտութիւնը կոչուրացնէ ձնշումը (պրեսամ) քնակիչներուն օգնութեան երթալու բերդաբաղաբին՝ առաջին իսկ սպասնալիքներուն, և որոսերուն մոտեցած պահուն: Անոնք անվշիպելիորեն պիտի սպաննեն Ահմեդ էֆենդիին: Եվ արդէն գերազանց և հանդիպակաց եղբրին խիստ մոտ գտնվող ուժի մը սպառնալիքի տակ առանց ըլլալու ալ, թուրքերը կրքից որեւէ բերդաբաղաբ պիտի չհանձնեն հոժար կամբով: Մանուկ բն ըստով նաև, որ հորմահետ Փեհլիվան Արա հեռացալ Իսմայիլին, այս բերդաբաղաբը չի գտնվիր այլևս Ահմեդ էֆենդիի իշխանութեան տակ:

Զորավարը հարցուց, թե Մանուկ բն կրնա՞ շուտով պատասխան ստանալ իր վստահելի մարդէն՝ Պապիկին:

Մանուկ պատասխանեց, թե գրավոր պատասխան մը չի կրնար ունենալ, բայց շուտով սուրհանգակ մը պիտի գրիկ անոր Ռուստուկ՝ այստեղ կանչելու համար զայն, որպէսզի տեղեկութիւններ հաղորդել և նոր հրահանգներ ստանալ:

Զորավարը սույն խնդրոյն մասին Մանուկ բնի հետ զաղտնի երկրորդ տեսակցութիւն մը հետաձգեց անոր (Պապիկի) վերադարձին:

Նորին վստածութիւնը ըստով նոր, Մանուկ բնին, թե կրնա վստահեցնել Ահմեդ էֆենդիին, թե մարաջախտը տողորված է բարյացակամութեամբ և վահանանութեամբ և որ Մանուկ բն ինքն ալ կրնա հուս գնել ամենաշոյիչ վարձատրութեան մը՝ իր իր մատուցած ծառայութեանց համար, և պատված պիտի զգա ինքզինք իր ազնկցութիւնը ի գործ դնելու այդ նպատակով, եռանդով և նշտութեամբ:

Մանուկ բն ապահովուցուց զորավարը, թե նվիրված է Ռուսիո շահերուն զեռ թուրքիա գտնված ատեն և հիմա, որ ռուս կայսերական բանակին անմիջական պաշտպանութեան տակ է՝ քնականաբար իր գործունեութիւնը պիտի կրկնապատկել բոլոր այն բաներուն մեջ, որոնք կախում ունին իրմէ: Կըսն միևնույն ատեն, թե իրեն համար ավելի դյուրին է Ահմեդ էֆենդիին Ռուստուկին անցընել Վալահիու, քան թե իրականացնել Զուրջովայի անձնատուութիւնը առանց ռուս բանակին մաս մի անցած ըլլալու: Դանուրի հանդիպակաց ամբ: Դիտել տվալ, թե ներկայիս ճիշտ պահն է, երբ թուրքերը, պատակտած, լպիտի կարենան ռուսերուն զորավոր և կենդրոնացյալ դիմադրութիւն մը ցույց տալ: Առանց ազոր, ըստով, եթե ուզվի բերդաբաղաբները պաշարել կանոնավոր կերպով, անոնց ամեն կողմն հաջորդական օգնութիւններ պիտի հասնին, և անոնց գրավումը շատ սուղ պիտի արժն մեղի:

Զորավարը հրավիրեց Մանուկ բեյը Պապիկի վերագարծը աբաղացնել իմանալու համար անկե Ահմեդ էֆենդիի տրամադրությունները և տեղեկագրելու համար մարաշախտին:

